

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

#### ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


|                  |                                                                         |                 |
|------------------|-------------------------------------------------------------------------|-----------------|
| Կրթական.         | Պարսկաստանի Հայերի դպրոցական վիճակը.....                                | Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ    |
| Ազգային.         | Առաջնորդական ճգնաժամ.....                                               | Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ   |
| Քաղաքական.       | Պարսկաստան եւ իւր ղեկավարական կազմութիւնը                               |                 |
| Չափաքանական.     | Թուրքական խաղ մը.....                                                   | Յ. ԵՌՈՒՅԵԱՆ     |
| Տեղագրական.      | Տիգրանակերտ կամ Ամիդ.....                                               | Մ. ՆԱԹԱՆԵԱՆ     |
| Բանաստեղծական.   | Երբ զիս տանին . . . — Տպաւորութիւնը եկեղեցւոյ ( Վիկտորիա Աղանուր )..... | Թարգմ. ԱՐՍՈՒԿԷՍ |
| Գիտական.         | Կառավարական զուլալը.....                                                |                 |
| Պատմական.        | Քանի մը խօսք Նէվրուզի նշանակութեան մասին...                             |                 |
| Քաղաքական.       | Արտաքին, ներքին, Ազգային.....                                           |                 |
| Սիւսիսի եւ Մարի. | (Կղտվիէ տը Մոթէքէն) Թարգմ.....                                          | Մ. ՉՈՊԱՆԵԱՆ     |

#### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

|                           |                |                 |
|---------------------------|----------------|-----------------|
| Կ. Պոլիս.....             | տարեկան.....   | Կէս ոսկի Օսման. |
| ».....                    | վեցամսեայ..... | Քառ » »         |
| Գաւառներ.....             | տարեկան.....   | Կէս » »         |
| Օտար քաղաքներ.....        | ».....         | 12 նրանք        |
| Թղթատարութեան ծախք »..... | ».....         | 15 դան. արծաթ   |
| Մէկ թերթին գինն է.....    | ».....         | 60 փարայ        |

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութեան Օրէնքը և Մասիս լրագրաց  
Ղալաթի մէջ Կորաշուկեան խան



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

# ԳՐԱԴԱՐԱՆ

## ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Հայկաթիւ 3 Մայիս

ՀՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

|                              |       |           |
|------------------------------|-------|-----------|
| 3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի | ..... | 110 7/8   |
| 3 » » (վճռկնկն)              | ..... | 110 1/2   |
| 3 » Բարիլի » (պանքայի)       | ..... | 22 85     |
| » » » (վճռկնկն)              | ..... | 22 97 1/2 |

ՀՆԹԱՅՔ ԱՐԺ-ԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոնսոյիտի

Դասկեկան

|                                                |           |
|------------------------------------------------|-----------|
| Երեկ երեկոյ Գոց. (Միաց. Ը. Սէ. Ի)              | 47 23     |
| Պորտային Գոցուէլէն վերջը »                     | 47 48     |
| Բերայի մէջ »                                   | —         |
| Առաւօտուն բացուեցաւ »                          | 47 47 1/2 |
| Բարձրագոյն գին »                               | 47 47 1/2 |
| Նուազագոյն »                                   | 47 74     |
| Կէս օրին »                                     | 47 47     |
| Փոխաւելութիւն 1858) A. Սէ. Ի Գ. Կ. Ս. Ո. 32 20 |           |
| » 1862) » » » » 48 20                          |           |
| » 1860) B. » » » » 47 45                       |           |
| » 1863) C. » » » » 47 45                       |           |
| » 1872) » » » » 47 45                          |           |
| » 1865) » » » » 47 45                          |           |
| » 1869) » » » » 47 45                          |           |
| » 1873) » » » » 47 45                          |           |

Ինիֆիլէ Եգիպտական

|                                 |           |
|---------------------------------|-----------|
| Երեկ իրեկուն Գոցուէցաւ          | 74 25     |
| Այս առտու բացուեցաւ Գ. Կ. Ս. Ո. | 70 25     |
| Կէս օրին                        | 70 22 1/2 |

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

|                                        |         |
|----------------------------------------|---------|
| Սօրիթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Սէ. Ի. Լ. Բ. | 3 42    |
| Քրէտի Ժէնէրալ..... » » Օսմ. »          | 6 34    |
| Պանք տը Գանա..... » » » »              | 5 40    |
| Սոս. Շանժէ վայէօր. » » » »             | 3 30    |
| Թրամուէյ..... » » » »                  | 267 1/2 |
| Բուսէլիի երկաթուղի..... Ֆր.            | 42 75   |
| Օպլիկասիօն տը Բրիտիթէ..... »           | —       |
| Բաժնեթուղթ Լաւրիօմի..... »             | 64      |

Հնրացք դրամոց

|                            |        |
|----------------------------|--------|
| Օսմանեան ոսկի..... զր. »   | 400    |
| 20 Ֆրանքոց..... » »        | 87 33  |
| Անգլիական ոսկի..... » »    | 110 25 |
| Բոլ Իմբէրիալ..... » »      | 90 48  |
| Քրիսից..... » »            | 54 45  |
| Ռուսկի թղթագրամ..... » »   | 9 00   |
| » արծաթ..... » »           | 89 30  |
| Ֆիօրին..... » »            | 8 35   |
| Մէք. արծ. (տարբ.)..... » » | 107 36 |
| Վէցնոց..... » »            | 102 30 |
| Հինգնոց..... » »           | 102 25 |

|                   |       |
|-------------------|-------|
| Մէթալիք..... » »  | 98 30 |
| Պղինձ..... » »    | —     |
| Թղթագրամ..... » » | —     |

## ԵԻՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 14 Մայիս, ժամ 3 վայր. 15 երեկոյ

|                                  |        |
|----------------------------------|--------|
| Անգլ. քոնսոյիտէ.....             | 99     |
| Օսմ. » Սէ. Ի. Բացուեցաւ.....     | 43     |
| » » » Գոցուէցաւ.....             | 45 7/8 |
| » » » Ա.....                     | 32 1/2 |
| » » » Բ.....                     | 48     |
| » » » Գ.....                     | 45 7/8 |
| Օթօման 1874.....                 | 66 1/4 |
| Փոխաւելութիւն 1877.....          | —      |
| Պանք Օթօման.....                 | 44 1/8 |
| Ռուսական փոխաւ. 1873.....        | 93     |
| Եգիպտական միացեալ (Ինիֆիլէ)..... | 63 1/8 |
| » առանձն. (Բրիվիլէթիլէ).....     | 84     |
| Տայրա Սանիէ.....                 | 61     |
| Տօմանիալ (փոխաւ. Բօչիլտ).....    | 84     |
| Հունգարական պարտաթուղթ 40/0..... | —      |
| Փոխանակութիւն Բարիլի վրայ.....   | —      |

Վիեննա, 12 Մայիս, ժամ 4 երեկոյ

|                                 |        |
|---------------------------------|--------|
| Փոխանակութիւն Լոնտոնի վրայ..... | 124 90 |
| Օսմանեան երկաթուղի.....         | 20 20  |

Բարիլ, 12 Մայիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

|                                          |            |
|------------------------------------------|------------|
| Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց.....    | 109 05     |
| » » 3 0/0.....                           | 80 20      |
| Օսմանեան քոնսոյիտէ Սէ. Ի. Բացուեցաւ..... | 46 45      |
| » » » Գոցուէցաւ.....                     | 46 42 1/2  |
| » » Սէ. Ի. Բ.....                        | 48         |
| » » Գ.....                               | 46 40      |
| Օսմանեան երկաթուղի.....                  | 42 50      |
| » Իէթիի բաժնեթուղթ.....                  | —          |
| Պանք Օթօման.....                         | 539 37 1/2 |
| Գրէտի Լիօնէ.....                         | 536 25     |
| » Ֆոնսիէ.....                            | 1340       |
| Բաժնետոմս Լիօնի.....                     | 1247 50    |
| Սուէզի ջրանցք.....                       | 2012 50    |
| Ռուսական 5 0/0 1877ի..... »              | 99         |
| Իտալական Ռանթ.....                       | 94 70      |
| Եգիպտական միացեալ.....                   | 323 75     |
| Սպանիական (արտաքին).....                 | 59         |
| Բրիտիթէ Թիւրք.....                       | 380        |
| 5 0/0 Հելլենական.....                    | —          |
| Զէք Լոնտրայի վրայ.....                   | 25 32      |

## ԲԱՐԻՋ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Փարիզ, 12 Մայիս, ժ. 10, Վ. 30

|                             |            |
|-----------------------------|------------|
| Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0..... | 108 93 3/4 |
| Օսմանեան ».....             | 46 45      |
| Եգիպտական միացեալ.....      | 322 50     |



# Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ՄԱՅԻՍ 4

ԹԻԻ 3768

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 4 ՄԱՅԻՍ

## ԿՐԹԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԸ

Եւ դեռ անցեալ տարի էջմիածնում եւ ղած ժամանակս խոստացայ ձեզ հաղորդելու պարսկաբնակ Հայերի դպրոցական վիճակը մի ամիսոյի յօդուածով: Գուցէ դեռ երկար ժամանակ չկատարէի խոստումներս, որովհետեւ միմեանց արագութեամբ յաջորդող տխուր երեւոյթները, որոնցով լի է այժմ պարսկաբնակ Հայերի կեանքը, մարդի մէջ ոչ փափագ եւ ոչ եւս տրամադրութիւն են գրգռում, եթէ չստանայի « Մանկավարժանոց » ի վերջին տետրը: Այդ տետրը փոքր ինչ սթափեցրեց ինձ, ըստ որում ես տեսայ, որ ընդհանուր վճատութեան, բարոյական թմրութեան ժամանակ, դուք ձեր առաջվան եռանդով, յոյսով եւ հաւատով գործում էք: Դուք հաւատում էք ապագային, որով եւ երջանիկ կարող էք համարվել եւ ձեր օրինակով կամենում էք ասել, որ որքան տխուր եւ վճատեցուցիչ լինի մեր ներկայ կացութիւնը, բայց դարձեալ faisons notre devoir, le reste est vanité: Ուրեմն ես եւս կատարեմ պարտքս, այն է խոստումս:

Պարսկաբնակ Հայերի ընդհանուր կըրթական գործը յոռի, վատ վիճակի մէջ է: Այդ հանգամանքը առաջ է գալիս ժողովրդի չքաւորութենից: Ամբողջ Պարսկաստանում այժմ հազիւ 30 հազար Հայ լինի: Դոցանից մօտ 15 հազարը կեդրոնացած է

Ատրպատականի նահանգում. Թավրիզում, Սալմաստում, Խոյի, Ղարաղաղի, Ումիայի գաւառներում եւ գիւղերում, իսկ մնացածը ներքին Պարսկաստանի զանազան քաղաքներում — Թէհրան, Համադան, Նոր-Ջուղայ եւ շրջակայ գիւղեր, Բաշտ, Ղազուվեն, Զանդաւ, Շիրազ ևն:

Ամբողջ Ատրպատականում հայաբնակ քաղաքների եւ գիւղերի թիւը 118 է: Դոցա մէջ գտնվում են 3,158 տուն Հայ: Թեմի մէջ կան երկու վանք. Արտաղի Թաղէոս Առաքելայի վանքը եւ Դարալամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը եւ 92 եկեղեցի: Քահանաների թիւն է 71: Կան գաւառներ, օրինակ Մարաղայ եւ Սովուճբուլաղ (Պարսկական Քրդաստան), որտեղ քահանաներն անգամ թուրքերէն կամ քրդերէն են խօսում: Այդ 3,158 կամ մօտ 15 հազար Հայ ժողովրդի դպրոցական վիճակը հետեւեալ կերպարանքն ունի: Թավրիզի մէջ մի կեդրոնական դպրոց կայ, նիւթապէս ապահովված եւ բաւականին բարեկարգ դրութեան մէջ Արամեան անունով, որ գտնվում է Ներսի կոչված թաղում, մի ծխական դպրոց եւս դրսի-Լիւլալայ կոչված թաղում կայ: Բացի դորանից կայ մի մասնաւոր ծխական դպրոց « Եղբայրսիրական » կոչված: Օրիորդական դպրոց 3 հատ կայ, երեքն եւս ծխական: Այնուհետեւ թեմի մէջ մի դպրոց կայ միայն Սալմաստում:

Թավրիզի Արամեան կեդրոնական դպրոցը բաղկացած է 1 նախակրթարանից, 1 պատրաստականից եւ երեք հիմնական դասարաններից: Բոլոր աշակերտների թիւն 130 է, այսպէս նախակրթարան՝ 50, պատրաստական՝ 30, Ա. դաս՝ 25, Բ. դաս՝ 15, Գ. դաս՝ 10: Աւանդվող ա-



ուարկաներն են, կրօն, հայկական լեզու, ռուսերէն, պարսկերէն եւ ֆրանսերէն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնաշխտութիւն եւ երգեցողութիւն: Այդ դպրոցը տալիս է միջակ կրթութեան հիմունքը եւ աւարտող աշակերտների մեծ մասը առեւտրական գործունէութիւնն են ընտրում իրանց ասպարէզ: Դպրոցը ազատ է ըստ ամենայնի օտար միջամտութենից, միայն ենթարկւում է ժողովրդից ընտրված հոգաբարձութեան իրաւասութեանը, որի նախագահն է առաջնորդը:

Աւսման տարեկան վճարը 3 ռուբլի է, աղքատները ձրի: Իսկ օրիորդական դպրոցը, որ մի եւ նոյն հոգաբարձութեան եւ ուսուցիչների ձեռքով է կառավարւում 3 դասարանից է բաղկացած. նախակրթարան (թիւ աչակ. 14), պատրաստական՝ 10, առաջին դասարան՝ 10: Բոլոր աշակերտուհիների թիւը 54 է: Առարկաները—կրօն, հայկական լեզու, թուաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, երգեցողութիւն եւ ձեռագործ: Օրիորդական դպրոցի ծախսը Արամեան դպրոցն է հոգում: Դպրոցն ունի 4000 թուսման կամ 12 հազար ռուբլի դրամագլուխ եւ մի երկու անշարժ կալուած, որոնք սակայն չատ քիչ եկամուտ են բերում: Տարեկան մշտական եկամուտն է 4500 ռուբլի, հետեւեալ աղբիւրներից. դրամագլխի տոկոս—1650 ռ., ռուս տէրութեան յատկացած տարեկան օժանդակութիւն—450 ռ., Պարսից չահր տարեկան ընծայ—670 ռ., աշակերտական թոշակ 300 ռուբլի, եկեղեցական արդիւնք մոմովաճառութեան 150 ռ., մասնաւոր անձների մըշտական օժանդակութիւն 800 ռուբլի: Ինչպէս տեսնուած է, Արամեան երկսեռ դպրոցները նիւթապէս բաւականին ապահովված են: Գալով Լիւսիւայ թաղի երկսեռ ծխական դպրոցներին, պէտք է ասել, որ նոքա ապահով են, պահպանւում են եկեղեցու եւ ժողովրդի արդիւնքով: Աշակերտների թիւն է 35, իսկ աշակերտուհիների—35: Հարկաւոր եւ համարում ասել, որ Թափրի-զի Հայերի թիւը 400 տուն է: Մնացած Ատրպատականի 2758 տուն հայ ժողովուրդը, որ ցրուած է, ինչպէս ասացի, 117 քաղաքների եւ գիւղերի մէջ, իր զաւակները

կրթութեան համար մի ծխական դպրոց ունի Սալմաստում: Իրերի այդ միջակին մէջ բողոքական եւ կաթոլիկ քարոզիչները հեշտութեամբ կարողանում են գրաւել դէպ ի իրանց դպրոցները հայ մանուկներին: Եւ ձեռնպահ եմ մնում բացատրելու պատճառները, որոնք առաջացրել են այս տեսակ ցաւալի դրութիւն:

Գալով բուն Պարսկաստանի Հայերին, այսինքն այն թեմին, որ կոչւում է Պարսկա—Հնդկաստանի թեմ եւ գտնւում է Նոր—Ջուղայի Ամենափրկչեան վանքի առաջնորդի հովուութեան ներքոյ, պէտք է ասել որ նոքա բնակում են 5 քաղաքների—այն է 1) Նոր—Ջուղայ—371 տուն, 2) Թէհրան—75 տ., 3) Շիրս դ—7 տ., 4) Բուշեռ—9 տ., 5) Համադան—40 տ., ընդ ամեն 502 տուն եւ 54 գիւղօրէիքի մէջ—բոլորն 2544 տուն ուրեմն թէ՛ քաղաքաբնակ եւ թէ՛ գիւղաբնակ տների թիւը ընդ ամենն է 3046: Այդ 3046 տունը բաղկացած է 13,975 հոգուց, որոց 9966 արական, իսկ 9009 իգական սեռից: Որքան մեզ յայտնի է, միայն երկու կանոնաւոր դպրոց կայ. մինը—Նոր Ջուղայում, միւսը—Թէհրանում: Նոր Ջուղայի դպրոցը իր գոյութիւնը պարտատական է դեր. Առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոսին, եւ Զիւ—Սուլթան Շահի որդուց, որ Սպահանի կուսակալն է, օժանդակութիւն է ստանում: Նոր—Ջուղայում կայ եւ մի հայկական տալարան, որ տեղ մօտ 10 գիրք է սպվել մինչեւ այժմ 1872 թուից սկսած: Առաջնորդը աշխատում է այժմ աւելի ընդլայնել տալարանի դործունէութիւնը: Վերեւում մոռացայ ասել, որ Թափրիզում կա եւ մի բաւականին հարուստ եւ ճոխ հայկական ընթերցարան, որ տեղ ստացվում են բոլոր հայ լրագիրները:

Մենք տեսանք, որ Ատրպատականի Հայերի թիւն է 15,000, բուն Պարսկաստանի Հայերի թիւն 13975, ուրեմն բոլոր Պարսկաբնակ Հայերի թիւը 35175 է: Պէտք է ասել, որ ոմանք աւելի, այն է 50 հազար են հաշուում:—Այս նկարագիրը ցոյց է տալիս, որ կրթութիւնը շատ նուազ է տարածված պարսկաբնակ Հայերի մէջ: Հարկաւոր է ուղարկել երկու հմուտ թեմական վերատեսուչներ եւ երկու փոխ—վերատեսուչներ, որոնք չըջելով քաղաքները եւ գիւղերը հաս-



տատէին հայկական դպրոցներ : Սպասենք , մինչեւ աստուած կը յարուցանէ մեր եկեղեցու համար մի սրտացաւ կաթողիկոս , որը վերջապէս ուշք կը դարձնէ պարսկաբնակ Հայերի թշուառ վիճակի վերայ :

Թավրիզ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ  
(ՄԱՆՆԱՎԱՐԺԱՆՈՅ)

## ԱԶԳԱՅԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Դարձեալ մի յօդուած կրթութեան սահմաններից դուրս . պիտի գրեմ ամբողջ Հայաստանը անդամալուծող առաջնորդական ճգնաժամի վրայ : Պիտի գրեմ, զի մայրաքաղաքի մամուլը քիչ է խօսում այդ նիւթի վրայ : Պիտի գրեմ, զի, իբրեւ գաւառաբնակ, ես աւելի սրտիս մօտ եմ գտում իմ հայրենակիցների վէրքերը ցոյց տալով, կարեւոր ըստ պեղանին էլ առաջարկել : Ո՛չ, մայրաքաղաքի մէջ ապրողն անկարող է լաւ զգալ գաւառացու վիշտերը : Ուրիշ է լսել եւ շատ ուրիշ տեսնել, զգալ, ենթարկուիլ եւ ըզգածուիլ :

Մի թոյցք իմ բնաբանից դուրս . պարբերական մեծ խնդրից յետոյ համայն ազգը ալեկոծվում է կաթողիկոսական ընտրութեան կարօտալի ելքը վերջապէս տեսնելու համար : Ինչո՞ւ այդ ալեկոծում, յուսահատութիւն, իրարանցում . զի ամբողջ ազգը վճռած է իր աւանդական սրբավայրը իր հազարաւոր եպիսկոպոսներից ու վարդապետներից մի միայն երկու-՜ի ձեռքը յանձնելու : Չընտրուեցա՞ն այդ երկուքը՝ ամենայն ինչ վերջացած է . սրտածմիկ երեմիականները վաղօրօք արդէն պատրաստուած են . մնա՛ս բարեաւ, յո՛յս, զի հայ մարդու համար միշտ այդպէս խաբուսիկ ես :

Ո՛րչափ ողորմելի է մի ազգ . որ իր ամենաբարձր պաշտօնի համար մի միայն երկու ընտրելի կարող է ներկայացնել . ասում եմ ըստե՛ս . . . անիրաւութիւն կը լինէր չը յիշեցնել, թէ՛ այդ ընտրելութիւնը պէտք է հայի՜նա եւ ոչ եւրոպայի՜ն մտքով ըմբռնել . զի

եթէ ազգը այսօր պատրիարքական եւ կաթողիկոսական երկու մեծ ասպարէզների համար մի միայն երեք-՜ի անձ հրապարակ նետեց, անշուշտ նա դժուարութիւն պիտի գտար աւելի թուով արժանաւորներ գտնելու :

Սակայն ի՞նչ պիտի ան՛ինք մենք եթէ մի անակնկալ պատահար գրկէր, վերացնէր Հայոց աշխարհի միջից, սրանից երեք չորս ամիս առաջ, մեր եկեղեցականների այդ երեք ընտրելագոյն գոհարները . . . Ո՛չ ապաքէն պիտի զինուէինք դարձեալ մեր աւանդական «երկու չարիքից փոքրագոյնը ընտրելու» նեղհայեաց օրէնքով : Բայց ո՞ր պէտք է հասցնեն մեզ մեր այդ հնադարեան, մաշուած սկզբունքները : Չգէ՛նք մի հարեւանցի հայեացք այս ծանր խնդրոց վրայ :

Ահա՛ մի ապուշ պատանի, որ այս ինչ կղզու միաբանների մօտ երկա՛ր տարիներ «փոքրաւոր» ական եւ «մեծ» ական պարտաւորութիւնների մէջ մաշուեալ յետոյ մերձենում է վերջապէս իր իդէալ-վեպարին :

Ահա մի բարեպաշտ երիտասարդ, որ վաղուց ի վեր իր ծնողներից ու ազգականներից «ճշմար» մականունը կրելուց յետոյ, յաջողում է վերջապէս արեղայական փիլոսոփայութեամբ ձգելով՝ անապատի մութ խորշերում իր ջերմեռանդ աղօթքները շարունակել :

Ահա՛ մի դժբաղդ աճառն, որ իր նազելի լծակցի հետ իր ուղեղի հաւասարալիւծութիւնն էլ կորցնելով, թքում է մեր «մեղաւոր» աշխարհի «ուսանողութիւնների» վրայ՝ Յաւիտենականի հետ իր «մաքուր» յարաբերութիւնները վերահաստատելու համար :

Ահա վերջապէս մի ծոյլ, մի անառակ, մի դժբաղդաւոր, մի Աստուծոց մոռացուած, մարդ կանցից հալածուած թշուառական, որ իր սոսկալի մեղքերը քաւելու եւ յաւիտ յիշահաց ուտելու համար ինքիւնքը հայ ժողովրդի կրօնասիրական «անկեղծոցն» է նետում :

Ահա թէ ի՞նչ ծագում ունին մեր կուսակրօն եկեղեցականների մի քանիններն . . . եւ այդ ապուշ փոքրաւորներն ու մոնթերը, ձգնաւորներն ու ուղեղի հաւասարալիւծութիւնը կորսնցուցած դժբաղդ ամուսինները, ծոյլ եւ դատարկապորտ թըշուառականներն եւ որ «երկու չարիքից փոքրագոյնն ընտրելու» հիման վրայ պիտի մա-



տակարարեն մեզ մեր ազգային վերածնուն-  
թեան վիթխարի տէր՝ պատրիարք—կաթո-  
ղիկոսացուները: Ողբամ զբեզ, Հայոց աշ-  
խարհ . . . :

Բարձրանալով այդչափ ստոր խաւերից, մեր արեղաները չունին ամենեւին վստա-  
հութիւն թէ պիտի կարողանան մի օր մեր քահանայապետական կազմակերպութեան վերնագոյն գաղաթիւները հասնիլ: Այդ պատճառով նոքա չունին բնաւ այն փառա-  
շինարհայ միշտ զէպի վեր ու վեր: Եւ կա-  
րելի է հաստատ ասել որ այսօր ոչ մի ա-  
բեղայ երազել անգամ չէ կամենում թէ մի օր պիտի կարողանայ պատրիարք կամ կա-  
թողիկոս դառնալ: Իսկ մի պաշտօնեայ որ զուրկ է փառասիրական զգացումներից, միշտ պիտի մնայ անշարժ, խանգարիչ եւ ապականեալ յար եւ նման այն առածի թէ «կանգնած չուրը կը հոտի»:

Այսպէս է ներկայանում մեզ այսօր մեր մեր կուսակրօն հոգեւորականութեան վի-  
ճակն եւ դեռ եւս պիտի մնայ այդպէս շատ հեռու ապագայում: Եւ եթէ ներկայ ըր-  
պէս մեր հաղարարը վեղարաւորների մէջ փայլում են մի քանի շատ յարգելի անձնա-  
ւորութիւններ, անշուշտ այդ շնչին բա-  
ցառութիւնը ոչինչ կշիռ չունի ընդհանուր մեծ երեւոյթի առաջ:

Ձը պիտի կշտամբեմ մեր ազգի ծայրա-  
հեղ անհոգութիւնը լաւ հոգեւորականներ պատրաստելու մասին, այլ պիտի ջանամ նրա մեծ բաղձանքներից մէկն ի կատար ա-  
ծելու դիւրութիւնը ապացուցանել:

Ե՛ր պիտի մենք շարունակ անդիտակցա-  
պէս կամ հաստատ կամքով մեր շատ աւան-  
դական սրբութիւններից ձեռք քաշենք. միթէ մեր նախնիք նուա՞զ կրօնասէր էին քան մենք. միթէ նրանք նուա՞զ խնայող էին, երբ կաթողիկոսական սուրբ պաշտօ-  
նին աշխարհական անձեր էին կոչում. միթէ աւելի հանձարեղ չե՞ն երեւում նոքա, որ այդպէս էին վարւում այն միջոցները, երբ Հայաստանեայց եկեղեցու գլուխը շատ հե-  
ռու պիտի լինէր մեր ժամանակի նուրբ բաղձարարական, ուսումնական եւ տնտե-  
սագիտական ուղեղով օժտեալ լինելուց. ո՞վ էր Հայ եկեղեցու մեծ հայրապետների թա-  
գըն ու պսակ Մեծն Ներսէսը. — ո՞չ ա

պարէն մի շինարարական, մի շինարարական օ-  
նեկապէս արքայական պալատի: Կարդացէ՛ք Փաւստոս Բիւզանդացին.

«Ապա ի մի ժողով կուտակեցան առ ար-  
քայն Արշակ մեծամեծք, նահապետք ազ-  
գաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից եւ  
դրօշուց տեարք. ամենայն սատրապը նա-  
խարարք եւ ազատք, պետք եւ իշխանք, զօ-  
րավարք եւ սահմանապահ. . . . Ապա յա-  
կանէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհա-  
ժողով բաղմութեան՝ զայն, որ անուանեալ  
կոչէր Ներսէս. . . . Ի տղայութեան անեալ եւ  
ուսեալ ի Կեսարացոց բաղարին՝ Գամրաց. . . .  
այլ ի ժամանակին յայնմիկ էր է Ժարս շինար-  
արական, սիրելի օնեկապէս արքային Արշա-  
կայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կար-  
գաց կենաց թագաւորութեան ի ներքոյ եւ  
արտաքոյ. . . . Կայր ի սպասու թագաւորին  
մօտ ի սրահս արքային, շարժական ստաւքն,  
զպողոպատիկն զոսկէպատեանն հանդերձ  
ականակապ մարդարտաղարդ կամարաւն ի  
սպասու նորա բարձեալ ունէր, առ հասարակ  
ատեանն զբողոք բարձեալ աղաղակէին թէ  
թէ Ներսէս լիցի մեր հովիւ\* : »

Իբրեւ հայ ազգի վերքերով տանջուող  
զաւակներից մէկը կը պնդեմ. Հայ ազգի ա-  
պագայ արժանաւոր պարբերացուներն ու հաջ-  
դիւսացուներն աշխարհականներէ մէջ պէտք է փնտ-  
րուի: Արժանաւոր անձնաւորութիւնը հոգե-  
ւորականների մէջ քաջաբանութիւն, կրթեալ  
աշխարհականների մէջ օրհամարանութիւն են.  
Եւ քանի յառաջ գնանք, այնքան պիտի այս  
համեմատութիւնն ահռելի դառնայ:

Հայ ազգը իր երիցս երանեալ Ներսէսը  
կորցնելուց յետոյ, ունի այսօր իր նոր Պատ-  
րիարքը. մեռաւ Պատրիարքը, կեցցէ՛ Պատ-  
րիարքը: Մաղթե՛նք յաջողութիւն:

Հայ ազգը Իջման Տեղի մեծ Դէտը կոր-  
ցնելուց յետոյ, ապրիլ ամսում նոր Կա-  
թողիկոս պիտի ունենայ. թո՛ղ ազգը ցըն-  
ծայ իր սրտի ընտրութիւնը յաջողցնելով:

Բայց այդքանով բանը չի վերջանայ.  
քանի մի տարուց յետոյ նոր ընտրութիւն  
պիտի կատարուի. պէտք է այժմէն արդէն  
սկսիլ մեր ազգի հոյակապ պտուղների, աշ-  
խարհական գործարների կենսագրութիւնները  
ի հանդէս բերել: Ես իմ կողմից, իմ ոյժերի

\* Տես Փաւստոսի (Վենետիկ) 67—69 երեսներ:



համեմատ, պիտի նուիրւիմ այդ դործին սրանից մի տարի յետոյ, զի աւելի շուտ անկարող եմ:

\*  
\* \*

Գառնանք այժմ մեր յօդուածի գլխաւոր նիւթին, քննենք առաջնորդական ճիշտութիւնը: Գրութեանս սկիզբը ասացի. «Ո՛չ, մայրաքաղաքի մէջ ապրողը անկարող է լաւ դէպք աւազակացու վտերը: Ուրիշ է ըսել եւ շատ ուրիշ՝ տեսնել, զգալ, ենթարկուիլ եւ ըզգածուիլ»: Եթէ այդ այդպէս է առհասարակ, յոյժ շօշափելի է մասնաւորապէս առաջնորդական խնդրի անկերպարան վիճակի մէջ: Պէտք է ապրիլ դաւաճեցում՝ առաջնորդ կոչուած էակներին մոգական ոյժը հասկանալու համար:

Այլ տեսնէք մի դաւաճական քաղաք իր անբաւարար կացութեան գաղաթնակէտը հասած. կրթարանները քայքայեալ, վարչական ժողովները կազմալուծեալ, անմիտ կուսակցութիւնները բորբոքեալ: Բայց անցաւ երեք ամիս եւ հաւ թէ ինչ մեծ հըրաշ տեղի ունեցաւ: — Կրթարանները վերաշինուեցան, պայծառացան. վարչական ժողովները վերընտրուեցան, արիացան. կուսակցութիւններն ամուսնեցին, հանդարտեցան: Ո՛վ էր այդ հրաշքի հեղինակը. — մի տգէտ, բայց փոքր ի շատէ արդար եւ աչքաբաց արեղայ, զի նա տեղին Առաջնորդ կամ Տեղապահ ընտրուեցաւ:

Բայց ի՞նչ պիտի պատահէր, եթէ այդ նորընտիր արեղան փոքր է շատ «արդար ու աչքաբաց» չը լինէր. այդ շատ ծանր է նկարագրել. . . Այդօրինակ պատկերների ականատեսը չէ կարող չը փղծկալ եւ միշտ պիտի փղծկայ, զի միշտ պիտի յիշէ:

Ուրեմն երջանկութիւնը ոչ լաւ առաջնորդ, այլ անպատշաճ «փոքր ի շատէ արդար ու աչքաբաց» առաջնորդ ունենալու մէջն է: Քանի՞ է Տաճկաստանի այդօրինակ առաջնորդների թիւը. — հաւաստիկ ձեզ ամենակարճ եւ ամենամեծ պատասխան. Հայաստանի դաւաճական քաղաքների մեծ մասը այսօր իր աչքը տնկել է չարաբաստիկ Գարեգին վարդապետ Սրուանձտեանցի վերայ, բայց Արտանդնուպոլսի շքեղ թաղերը դաւաճեցիներին նախանձերով՝ հայր սուրբի

փէշերը ամենայն ուժով բռնած՝ «չենք թողնէր» են պատասխանում: Ամբողջ Հայաստանը հեծում է այսօր առաջնորդական խնդրի ծանր ճնշման տակ — ահա՛ օրուան վիթխարի երեւոյթներից մէկը: Ո՛վ է մտածում այդ մասին, ո՛ւր է այդ վերքի դժհացուցիչ սպեղանին:

Ձը պիտի երեմիական ողբ կարդամ հայ ազգի ապշեցուցիչ անհողութեան մասին, այլ պիտի սպացուցանեմ նրա մեծ վերքերից մէկի բուժման դիւրութիւնը:

Է՞ր պիտի միշտ զուրկ մնանք նախաձեռնութեան (initiative) շնորհից. է՞ր չը բանանք մեր կեանքի նորանոր շաւիղներ. միթէ մեր նախնեաց սրբութիւնները պահելով հանդերձ, պիտի չաշխատե՞նք նրանց անսղաճ անյարմարութիւնները վերացնել. է՞ր երբ փոխուել են հանգամանքները — պիտի չը փոխենք եւ ղեկավարիչ կարգերը: Ի՞նչ վնաս եթէ արեղաների տեղ՝ ահա՛նք առաջնորդ կարգէինք:

Իբրեւ հայ ազգի կենսական խնդիրներով զբաղող դաւակներից մէկը կը պնդեմ. Հայ ազգի արժանաւոր առաջնորդացիները ահա՛նք մեջ պէտք է փոխուել: Արժանաւոր առաջնորդացուները արեղաների մէջ բացառուել են, կրթեալ քահանաների մէջ մեծաճանապարհ են. եւ քանի որ այդ նոր սկզբունքը ծաւալուի, այնքան պիտի այս համեմատութիւնը ահուելի դառնայ:

Եթէ առայժմ մեր ամուսնացեալ եկեղեցականների կեանքի այդ մեծ բարեփոխութեան հետ ընդունուի նաեւ այրիացեալ քահանաների կրկնաճանապարհ — հաստատ կարելի է ասել թէ մի տարուայ մէջ մեր աշխարհի պատշաճ քահանաների թիւը պիտի հարիւրապատկուի:

Առ այժմ այսչափ: Մանրամասները պիտի դրեմ մի ուրիշ աւելի ընդարձակ յօդուածով: Հրաւիրում եմ մեր ազգի այս տաղնապալից խնդիրների վրայ ողջամիտ խմբագիրների, խոհեմ եկեղեցականների եւ ժողովրդասէր անձերի մասնաւոր ուշադրութիւնը:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ



## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԵՒ ԻԻՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

«Նովդէ Աբաղըէնիէ» իւր վերջին թիւերէն միոյն մէջ հետեւեալ կարեւոր տեղեկութիւններն հաղորդած է Պարսկաստանի զինուորական կազմակերպութեան վրայ :

Պարսկաստանի սահմանն ամենամեծ տարածութեամբ կը շօշափէ Ռուսիոյ սահմանը :

Այս սահման կը տարածի Արարատ լեռնէն Երասխ գետով, Պուլղար Զայով, Աթինա-Բաղարով մինչեւ Կասպից ծով եւ անտի Հասան-Ղուլի ծոցով Կասպից ծովի արեւելեան եզերքով մինչեւ Շանտիր եւ Սիմպար հովիտները բաժանող լեռներն եւ աւելի հեռուն դէպի արեւելք եւ հարաւ-արեւելք Սարախս եւ Հէրիրուզ եւ այս կէտէն դէպի հարաւ մինչեւ Բուլ-ի-Սաթուռ : Ռուսիոյ ցամաքային սահմանագիծը Պարսկաստանի հետ 2500 վերստէն աւելի է : Իսկ ծովային սահմանը 525 վերստէն աւելի է, այնպէս որ սոյն երկու տէրութեանց սահմանը կը բռնէ տարածութիւն մը Մոսկուայէն մինչեւ Թիֆլիս : Եթէ պատերազմ ծագի Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ աֆղանական սահմանի համար, Ռուսիա պարտաւորեալ կը լինի խորին ուշադրութիւն դարձնել սոյն սահմանին : Ռուսիոյ Պարսկաստանի հետ ունեցած վաճառականութիւնը բաւական մեծ գումարի կը հասնի, այն է 20 միլիոն րուբլի, եւ եթէ Կաւկասիս եւ անդրկասպեան ռուսական երկիրներն երկաթուղիով միանան միմիանց եւ Պարսկաստանի հետ, եւ Պաքուի մէջ տօնավաճառ հաստատուի, այս վաճառականութիւն մեծ զարգացում կ'ունենայ եւ Պարսկաստան մեծ նշանակութիւն կ'ստանայ : Ռուսիա որ այնքան կը ձգտի իւր վաճառականութիւնը զօրացնել Պարսկաստանի մէջ, տակաւին ծանօթ չէ այս երկրի քաղաքական եւ տնտեսական կենաց, այս թերութիւն յատուկ է Ռուսիոյ, որմէ եւ մեծամեծ փնտռներ կը կրեն իւր շահերն : Այս թերութիւն այնքան մեծ է որ ազդեցիկ թերութիւն իսկ ենթարկեալ են անոր : Այսպէս,

օրինակի համար, Մոսկովէի վեպոմոսի մերձակայ համարներէն միոյն մէջ Պարսկաստանի բնակչաց թիւն 5 միլիոն ցոյց տըրուած է : մինչդեռ 1381ի պաշտօնական մալ դահամարէն երեւցած է որ 7,653,000 բնակիչ ունէր, իսկ չորս տարուայ ընթացքում դոնէ 8 միլիոնի հասած կը լինի : Բացի պաշտօնական մարդահամարէն, չը կայ ուրիշ մարդահամար մը որմէ կարելի լինի հասկընալ թէ ո՛րչափ են Պարսկաստանի բնակիչները, եւ եթէ ՄոսկովսկիաՎ. Կոմիտարի բնակչաց թուոյն ճշդութեան մէջ 2-3 միլիոնի սխալ տարբերութեամբ մը կը գրէ, խորին տգիտութիւն կը ցուցնէ : Այս եւ այսպիսի բազմաթիւ խոշոր սխալներ կարելի էր յառաջ բերել չորս կը դործէ ռուս մամուլը եւ այս ամենն կ'ապացուցանէ թէ Ռուսերն ո՛րչափ թերութեամբ կը ճանաչեն այժմեան Պարսկաստանը :

Գիտար է ամբողջապէս ներկայացնել աստ ժամանակակից Պարսկաստանի լիակատար նկարագրութիւնը, սակայն նկատելով թէ ներկայ պարագայից մէջ անհրաժեշտ է շատ թէ քիչ դադափար մը ունենալ Պարսկաստանի եւ մանաւանդ նորա զինուորական կազմակերպութեան մասին, հարկ կը համարինք տեղեկութիւն մը տալ մեր ընթերցողաց :

Ռուսիա ի նկատ ունենալով դործոց քաղաքական եւ պատերազմական կացութիւնն ի Կեդրոնական Ասիա, այժմ կ'աշխատի տեղեկութիւններ ստանալ Պարսկաստանի զինուորական զօրութեան մասին : Ռուսիոյ պատերազմական նախարարի պաշտօնական հաշուեցուցակի համեմատ պարսկական զօրաց թիւը 105,000ի կը հասնի, որոցմէ 5000 թնդանօթածիգ զօրք, 55,900 հետեւակ, 51,000 կանոնաւոր եւ անկանոն հեծեւազօրք, 7,200 քաղաքապահք : Խաղաղութեան ժամանակ պարսկական զօրաց թիւը հաւասար է ռուսական զօրապետոց եւ սպայից ընդհանուր թուոյն : 1875ին յուլիս ամսոյն մէջ Շահի հրամանաւ մուտ դըտաւ կանոնաւոր զօրաժողովն եւ զօրաց ծառայելու ժամանակամիջոցը փոխանակ ցկեանս լինելու 12 տարի նշանակուեցաւ, բայց այս հրաման քանի մը տեղեր միայն դործադրուեցաւ : Պարսկաստանի մէջ Քրիստոնեայք, Հրեայք եւ Գաֆրերն ազատ են



զինուորական հպատակութենէ : Զօրքը կազմակերպուած է գաւառաց, ցեղերու եւ շրջաններու համեմատ . գաւառը կուտայ քանի մը գումարտակ , ցեղը մի գունդ եւ երբեմն երկու , իսկ շրջանը մի վաչտ : Սպայք կը կարգուին ընդհանրապէս այն գաւառներու կամ ցեղերու պետերէն որոցմէ հաւաքուած է զօրքը : Կանոնաւոր զօրաց հաստատումը սկսուած է Հիւնթթի 1240 թուին (1825) Շահ Ալլաս-Միրզայի օրով : Բայց միայն այժմեան ինքնակալ Նասրէտօին Շահը առաջին անգամ իւր զօրաց եւրոպական կրթութիւն տալու ձեռնարկեց աւստրիական եւ գերմանական սպաներու միջոցաւ : Նասրէտօին Շահ գահ բարձրանալուն պէս մեծ եպարքոս նշանակեց Էմիր Նիզամ Միրզա-Թաքէ խան , պարտ դնելով նորա վրայ զօրքն կազմակերպել : Միրզա-Թաքէ խան եւրոպացէն սպայներ բերել տուաւ և առաջին անգամ պարսկական զօրքերը գունդ երու , վաչտերու եւ դումարտակներու բաժնեց : Այն արգելքներ որոց կը բախին Պարսից պատերազմական նախարարները (Աղիզ խան) Միրզա Մուհամմէտ խան , Հոճոր , Հաճի Միրզա Հուսէյն խան) զօրաց կազմութիւնը բարեփոխելու համար , գլխաւորապէս դրամի պակասութեան եւ զինուորաց ռոճիկն ժամանակին չվճարելու եւ վճարելու ժամանակ ալ սպայից կողմէ ի գործ դրուած զեղծանց պատճառաւ են : Հաճի-Միրզա Հուսէյն խանի փոփոխումէն յետոյ պատերազմական նախարարի գործերը Շահն անձամբ կը կատարէր իւր ուղի Նայիպ-Սուլթանէ - Քեմրան-Միրզայի հետ եւ թէեւ Թեքէմալի Հաֆէթալի թէհրանի թղթակիցն անգամ մը հաղորդած էր թէ պարսկական զօրաց կազմութեան մէջ մեծամեծ բարեփոխումներ եղած են , եւ թէ մեծ յառաջդիմութիւն ըրած են , սակայն պարսկական զօրք տակաւին շատ հեռի է եւրոպական զօրաց հաւասարելէ : Տեղական սպայք ընդհանրապէս անտեղեակ եւ անընդունակ են պատերազմական գործին . իսկ նորընտիր զօրաց եւրոպացի կրթիչները Պարսից զօրաց մէջ մեծ նշանակութիւն եւ ազդեցութիւն չունին : Եթէ Պարսից հետեւակ զօրքեր լաւ կրթութիւն ստանան լաւ սպայներու միջոցաւ , ընտիր զինուորներ կարող են արտադրել : Եթէ հետեւակ զօր-

քը լաւ կարգապահութիւն ստացած չէ , գլխաւոր պատճառն այն է որ գէշ վարժած է եւ գէշ հրամանատարութիւն ըրած են անոր : Այստեղ զինուորականաց բարոյական արժանաւորութիւնը կ'ստորնանայ այնքան որքան կը բարձրանայ նոցա աստիճանը : Այսպէս վէտիլի աստիճանը բարոյական անկման սանդուղին առաջին աստիճանն է : Վէտիլէն կամ ենթասպայէն վեր կուգայ նայեղը որ համապատասխան է Թրքաց Բաշալիին . ասկէ յետոյ կուգան աստիճանը կամ հարիւրապետը որ Թրքաց Էնչապաշին է , եւ վերջը Թրքաց պէշապաշին . սարիէնի կամ փոխ գնդապետ , Թրքաց Գայմաթաբաբա եւ սարապա կամ գնդապետ , Թրքաց Բաշալի :

Իւրաքանչիւր գունդ կազմուած է 800 կանոնաւոր զինուորներէ . տասն զինուորներու գլխաւորը ծապաշին է . երկու ծապաշիններ մի վէտիլի հրամանատարութեան ներքոյ են : 4-5 վէտիլներ երկու ճափապաշիններու հրամանատարութեան ներքոյ են եւ այլն . բացի յիշեալ աստիճաններէն , իւրաքանչիւր վաչտ ունի ( կամ պարտաւոր է ունենալ ) դրոշակիր , նայեղ , Բաշալի , գանձապետ , բըժիշկ , վիրաբոյժ եւլն :

Պարսից զօրավարները Սերէք կը կոչուին . զօրավարք երեք դասի կը բաժնուին Սարապ , Սէքու-Տուր եւ Մեշէր . պարսկական գնդապետք իրենց ծառայութեանց համար մասնաւորապէս մեծ տիրուղս մը կը վայելեն , ճիշտանութեան քաջներ :

Պարսկական զինուց մասին աւելորդ է մանրամասնօրէն խօսիլ , որովհետեւ թէեւ վերջին ժամանակներս քանի մը տասնեակ հազար հրացաններ գնուած են , այլ այդ գէնքեր բաւական յոռի են : Արդարացի խօսելով Պարսկաստան տակաւին ամենեւին չունի այնպիսի զօրք , որոց վրայ կարելի լինի յոյս դնել : Պարսկաստան մինչեւ սեպտեմբեր անկարող է պահպանել իւր չէզոքութիւնը Աթլանտիտանի դէմ եւ նորա քաղաքական ճակատագիրը գրեթէ դիւաւաւաւ թելուէն միայն կախում ունի : Բազմաթիւ , որ հինգ տարի Շահի զօրքերուն մէջ լինալն , որ կ'ըսէ թէ եթէ Պարսկաստան եւրոպական կարգադրութեան ներքոյ լինէր , ամենակարճ ժամանակի մէջ կ'ունենար յոյժ ընտիր եւ կանոնաւոր զօրք , որ կարող է գերազանցել ասիական այլ տէրութեանց զօրքերը :



## ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽԱՂ ՄԸ

Անցեալները դերմանացի երեւելի դիտուն Պ. տը Պուա-Ռէյսոնի մի ատենաբանութիւնը կարգացինը Տիտըրօի վերայ, ատենաբանութիւն զոր Պէրլինի Ակադեմիայի առջև խօսեցաւ : Այս բանախօսութիւնը Տիտըրօի հարկւրամեակին առթիւ ըլլալով, ատենաբանը իւր խօսքը սկսելով փիլիսոփայօրէն ի նկատի կ'առնէ փիլիսոփայի մը վրայ խօսելու առթին պատշաճութիւնը :

Ի՞նչ ըսել է հարկւրամեակ : Բնութեան մէջ օրը որոշ է, ամիսը գրէթէ, տարին կայ եւ անփոփոխ է, բայց դարը կամ հարկւր տարին պարզապէս մարդոց հնարք է : Եթէ մարդիկ տարը մատեր չունենային, տասնորդական դրութիւնը չպիտի ունենային եւ կամ լաւ եւս, դրութեանց լաւագոյնը չպիտի ըլլար : Պահ մը ենթադրենք թէ մարդիկ վեցական մատ ունենային մէն մի ձեռքի վերայ : Ընդամենը տասներկու մատ : Այն ատեն ՏԱՍԸ պիտի անուանէին այժմեան տասներկուքը եւ ՀԱՐԻԻՐ այժմեան հարկւր քառասունեւեցորդը (քանի որ 12 անգամ 12 կ'ընէ 144) : Մեր թուաբանութիւնը քիչ մը տարբեր պիտի ըլլար եւ ի բաց առեալ հիմնական կանոնները, թէ՛ չորս գործողութիւնը եւ թէ՛ միւս հաշիւներ պիտի փոփոխուէին, եւ մի դարը 144 տարի պիտի ըլլար փոխանակ 100ի : Այս ենթադրութեան մի այլ եղանակին վերայ պիտի գրեմ Մասի մէջ :

Խնդիրը սա է որ, մեր թուաբանական դրութեան մէջ բոլորովին ենթադրական է տասնորդականը, եւ տարբեր թուաբանութիւն մը եւ կամ լաւ եւս շատ մը տարբեր թուաբանութիւններ յօրինել կարելի է խարխիւ ունենալով չէ թէ միայն տասնէն մեծ 12, 16, 20 եւ, այլ նաեւ տասնէն փոքր, ինչպէս 2, 3, 9 թիւերն :

Շատ մը խնդիրներ, որք դժուարաւ լուծելի պիտի ըլլային այսինչ դրութեան մէջ, դիւրաւ կը հասկցուին այն ինչ դրութեամբ եւ ինչպէս Պ. տը Պուա-Ռէյսոն կ'ըսէ, մեզ համար շատ մը թուաբանութենէ անկախ գործեր թուաբանական դրութեան փոփո-

խութեամբ տարբեր ուղղութիւն պիտի ըստանային : Այժմեան դարն այն ատեն աւելի երկար եւ կամ աւելի կարճ ժամանակի տեւողութիւն պիտի ստանար : Եւ պատմութիւնն թուականներու փոփոխութիւններ պիտի կրէր եւ գուցէ անցքերն ալ համակերպելով այլափոխէին : Երկոտասանական դրութեամբ 3,553 տարին 20 դար պիտի ընէր : Նաբոլէոն Պոնաբարդ իւր զօրաց Եգիպտոսի բուրգերը ցոյց տալով, չպիտի ըսէր թէ 40 դար յեւ ինչպէս Բաբելոն, այլ 20 դար, կամ լաւ եւս 20 թիւն ալ երկոտասանական դրութեամբ 18 պիտի գըրուէր եւ բաւական պիտի տկարանար Մեծին Կայսեր ճարտասանական քաջալերը :

\* \*

Թուաբանութեան մէջ կան շատ մը գեղեցիկ խնդիրներ որք այս հիման վրայ չինուած են : Ասոնցմէ մին է հետեւեալը զոր կը քաղեմ Ժոսեֆ Մաթեմատիկա պատուական ամսաթերթէն :

ԽՆԴԻՐ.— Ընկերութեան մը մէջ երկու կամ աւելի անձեր գտնուած ատեն խնդրեցէք որ մէն մի անձ մի թիւ ընտրէ միաւոր : Միայն մէկ հարցում ընելով կարող էք գտնել բոլոր մտածուած թիւերն :

Ահա՛ ինչպէս :

Առաջին անձին կ'ըսէք որ մտածած թիւն երկուքով բազմապատկէ : Ապա ձեր կողմանէ թիւ մը կուտաք որ վրան աւելցնէ : Գումարն հինգով բազմապատկել կուտաք :

Երկրորդ անձին թիւն այն բազմապատկելոյն վրայ թող աւելցնեն : Շարունակելով թող կրկնուի այս գումարն, ձեր կողմանէ ցոյց տրուած որ և է թիւ մը թող աւելցուի վրան, արդիւնքն ճով բազմապատկուի եւ երրորդ անձին մտածածն վրան աւելցուի :

Ենթադրելով որ երեք անձինք միայն կան, հոս կը կենանք և կը հարցնէք թէ ի՞նչ թիւ գոյացաւ : Ահա այս թիւէն հանելով ձեր կողմանէ աւելցուած առաջին թուոյն 3 անգամը եւ երկրորդին 30 անգամը, մնացորդի թուոյն միաւորներու թուանշանը երրորդ անձին մտածածն է, տասնաւորն երկրորդ անձին եւ հարկւրաւորն առաջին անձին :

Օրինակ :

Նիցուք թէ 3, 5 եւ 8 թիւերը որոշ-



ուած էին՝ ըստ վերոյիշեալ կանոնին՝ առաջին թուոյն 5ը կրկնելով կըլլայ 6, ասոր վրայ բացէն թիւ մը, զոր օր. 43 աւելցնելով կըլլայ 49 եւ գայս 5ով բազմապատկելով կըլլայ 245: Երկրորդ մտածուածն, որ 5, վրան աւելցնելով կըլլայ 250, կրկնելով կըլլայ 500, բացէն թիւ մը, զոր օր. 37 վրան աւելցնելով կըլլայ 537, 5ով բազմապատկելով կըլլայ 2685 եւ վերջապէս երրորդ թիւն վրան աւելցնելով կըլլայ 2695:

Այս 2,695 թիւն է որ մեզ կը հաղորդուի:

Եթէ հանենք 2,695 էն 50 անգամ 43 այսինքն 2,150 եւ 5 անգամ 37, այսինքն 185, կը մնայ 358 որոյ թուանշանները մշտածուածներն են ըստ կարգի:

Անօգուտ ըսել թէ մի եւ նոյն թուանշանը զանազան անձինք միանգամայն կըրնան ընտրել:

Այս խաղին ապացուցութիւնը յառաջիկայ մէկ յօդուածով ընդհանուր տեսութեան մը մէջ պիտի բացատրեմ:

Յ. ԵՌՈՒՍՈՒՖԵԱՆ

## ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԿԱՄ ԱՄԻԴ

(ՏԻԱՐՊԵՔԻՐ)

Ժամանակակից Բաբելոնի, Պերսիպոլեայ Բալիւրայ և այլոց հինաւուրց քաղաքաց, կանգուն կը մնայ դեռ Տիգրանակերտ կամ Ամիդ քաղաքը, յետ նոցա անհետացման, ունենալով իւր շինութեան ժամանակէն ի վեր միշտ ծաղկեալ կենալու հազուագիւտ յատկութիւնը: Այնպէս որ ոչ պակաս քան 2500 տարիէ հետէ Ասիոյ արեւմտեան աշխարհաց պատմութեան մէջ յաւէտ անկորուստ է իւր անունն իբր հաղորդ ամենամեծ դիպաց ու անցից: Տիգրանակերտ, որ այդ անունն առած կը համարուի ի Մեծէն Տիգրանայ երուանդեան, և որ Դ. ու Ե. դարուց մէջ Ամիդ սկսաւ կոչուիլ, կը գտնուի ըստ բարիդեան միջօրէին երկայնութեան իբր 37°, 30' եւ հիւսիսային լայնութեան իբր 38 աստիճանաց ներքեւ, Միջագետաց հիւսիսա-

յին դռան վրայ յաջմէ Տիգրիս գետոյ լայնածաւալ տափարակի մը մէջ որ հազիւ 1700-2000 ոտք բարձր լինելով կարի ջերմոտ կլիմայ ունի: Տեաքէի անունն զոր կը կրէ այժմ, յայտնի չէ ուստից ծագիլն, թէպէտ արաբական ստուգաբանութեամբ Պէթէի աշխարհ կը թարգմանուի, եւ այդու առիթ կ'ընծայէ կարծուելու թէ արաբական արչաւանաց ատեն առաջին անգամ Պէթիլի մը ձեռք իյնալով այդ անուանակոչութիւնն ստացած ըլլայ: Թէպէտ Հայաստանի Աղձնեաց նահանգի մի քաղաք, բայց իւր բաղդը կ'ընծայէ Հայաստանի ճակատագրին կապուած չմնալով Տիգրանակերտ ենթարկեցաւ այն ամեն նշանաւոր փոփոխութեանց ներքոյ որ Մեծին Կիւրոսի ժամանակէն ի վեր Միջագետաց եւ նորա սահմանակից աշխարհաց մէջ տեղի ունեցան: Եւ նախ Բաբելոնի, ապա Պաղտատի մեծահռչակ պողոտային վրայ լինելով գլխաւոր կեդրոններէն մին էր այն ահեղագոր բանակաց որ այս ու այն աշխարհակալի հրամանաց ներքեւ կը խաղային երբեմն այդ նշանաւոր արահետէն մերթ Արեւելքէ Արեւմուտք, մերթ Արեւմուտքէ Արեւելք, երբեմն Հիւսիսէ Հարաւ, երբեմն Հարաւէ Հիւսիս: Արեւմտեան ցեղէն (Կիւրոսի ցեղ) մինչև Սէֆեան (պարսիկ արդի թագաւորաց ցեղ) ցեղի Պարսիկներն, Մակեդոնական Յոյներէն (Ալեքսանդր եւ յաջորդքն) մինչև Հռոմէացիք եւ ստորին կամ Բիւզանդեան կայսերք, եւ Սասանեանք, եւ Արաբացիք, եւ Սելիւթացիք կամ Թաթարք և Օսմանցիք և հռչակաւոր Պողոտայէն անցուղարձ ըրեր են, հանգիստելով ի Տիգրանակերտ, ոյր վրայ թողած են յաւէտ կամ նուազ ազդեցութիւն: Նախնի աշխարհի նշանաւոր երեւոյթ կազմող այդ տեսարաններն մտքիս առջեւ պատկերացան կարգաւ, երբ 1884 օգոստոսի մէջ այդ մեծ պողոտայէն անցնելով Տիգրանակերտ կ'երթայի եւ չըջակայ բնակիչներէն կը լսէի ականջալուր նորա Աֆր անունն, մինչ կը կարծէի իսպառ տեղի տուած լինիլ Տեաքէի անունն առջեւ: Եւ երբ նախնի Բաբելոնի կամ Նինուէի պարսպաց մանրանկար եղող Տիգրանակերտի պարսպին առջև հասնելով կը հիանայի այն ահագին քարակերտ ամբարտաշին վրայ, թէպէտ չինական պարսպին առջև համարուի դա կաթիլ



մի յՈւլիանի, չէի կարող միեւնոյն ժամանակ յուշ չածել այն սարսափելի արիւնհեղութիւններն ու պատերազմներն որ եղած են նորա առջև կամ ներքսակողմն իբր արդիւնք այնքան պաշարմանց ոյց ենթարկուեր է Միջագիտաց հիւսիսային այդ բանալին, Արեւելեան եւ Արեւմտեան պետութեանց այդ հոյակապ մրցարանն, որոյ շրջապատ տարածեալ հաղարաւոր քիլոմետր հարթածաւայ տափարակն ամենամեծ ճակատամարտներու խիստ յարմարաւոր վայրեր կ'ընծայէ։ Անկարելի է Տիգրանակերտի վրայ նայիլ, խօսիլ կամ գրել եւ չյիշել ի մէջ այնքան պաշարմանց եւ առմանց գէթ Լուկուլլոսի պաշարում եւ առումն, նոյնպէս Շապուհ Երկայնակեացի եւ Կաւատի պաշարել եւ առնելն, մանաւանդ այդ վերջնոյն ըրած սոսկալի կոտորածն իբր 80 հազար մարդոց Քրիստոսի 503, ըստ ոմանց 515 թուականին։ Արաբացւոց ժամանակ Ամիրայի մը ձեռքն էր Տիգրանակերտ, զոր անհնար եղաւ Յունաց վերստին առնել, մինչեւ որ Լէնկթիմուր գրաւեց. ապա այլ եւ այլ ինքնագլուխ իշխաններ, վերջ ի վերջոյ Սուլթան Ալիմ Ա. Եալուզ 1515 թուին, եւ այնուհետեւ մինչեւ ցարդ Օսմանեան կայսերաց կը պատկանի, եւ կը պահէ դարձեալ այն մեծ կարեւորութիւն զինուորական եւ քաղաքական, զոր ունէր այդ քաղաքը ի սկզբանէ հետէ. զի Տիգրանակերտ կենսական այնպիսի տոկոսութիւն ունի որ միշտ ճոխ եւ փարթամ կը մնայ թէպէտ եւ այնքան տէր ու դրութիւն փոխած ըլլայ, եւ այդ կը պարտի իւր դրից որ զինքը միշտ արուեստից ու առեւտրոց մեծ շահաստան մը դարձնելու ամեն առաւելութիւնն ունի, ընդ մէջ գոյով իրով 7 օրէն ոչ պակաս հեռու քաղաքաց եւ աննշան աւանաց, որոյ բնակիչք նորա հրապարակին կը կարօտին միշտ ոչ միայն իբր կեդրոնի իրենց բոլոր (անկից փոքր) քաղաքաց կամ աւանաց, այլ իբրեւ շահաստանի ի վերայ մեծ պոզոտային որ ընդ մէջ Պաղատտի, Հալէպի եւ Փոքր Ասիոյ, յորոց կը տեղան ի Տիգրանակերտ ինչ որ պէտք լինի ընդհանրապէս իւր եւ իւր շրջակայ աշխարհաց բնակիչներուն։

Կուսակալութեանց այսքան բազմաթիւ լինելուն հակառակ մինչ երբեմն Ասիական

Թուրքիա խիստ ընդարձակ սահմանօք բայ սակաւ թուով կուսակալութեամբք կը կառավարուէր, Տիարպէքիւրի կուսակալութիւնն հաւասար Կարնոյ այն մեծ կուսակալութեանց մին էր որ կը պարունակէր ոչ միայն իւր այժմ ունեցած Բիւթանթութիւններն, այլ Էֆարբերդի եւ Տէրսիմի արդի կուսակալութիւններն ալ ընդարձակագոյն սահմաններով։ Այնքան կորուստներու հակառակ սակայն կը պահէ դարձեալ Տիարպէքիւր մեծ կուսակալութիւն ունենալով նորա յարակից ամեն կարգադրութիւններն, որ ուրեք ուրեք չկան, զորօրինակ վերաքննութեան ատեան եւ եւ։ Մասնաւոր յիշատակութեան արժանի են այն կանոնաւոր խճուղիներն ընտիր կազմութեամբ որ զինքը կը միացնեն Մէրտինի, Հալէպի եւ Մալաթիոյ հետ, առաւելութիւն մի ուստից զուրկ են հիւսիսային արեւելեան Թուրքիոյ գրեթէ բոլոր կուսակալութիւններն, խիստ սակաւ բացառութեամբ։ Դարձեալ դոցա շատերուն չունեցած մէկ կարեւոր բանն ունի Տիարպէքիւր, այն է Ժանդարմ կամ Բօլեոս տոտիկանութիւն, որ այնքան անհրաժեշտ է բնակչաց անվտանգութեան համար։ Մեր ճամբորդութեան մէջ յԱրդնի-Մատեն (միւլթէսարըֆանիստ քաղաք ընդ Տիարպէքիւրաւ) առաջին անգամ լինելով օսմանեան Բօլեոս տոտիկանաց պատահելիս ու քաղաքավարութեամբ ուստի դալ եւ ուր երթալ հարցուելին մեծ գոհութիւն պատճառեց մեզ, մանաւանդ որ նոցա մին որ մեզ ներկայացաւ, բարեկիրթ երիտասարդ մը, զիւրիւթիւններ եւս հայթայթեց մեզ մեր ճամբորդութեան մասին եւ այդ ամենն իւր պարտուց սահմանին մէջ ըմբռնելու գիտակցութիւնն ունէր։ Տիգրանակերտ իբր գալտային քաղաք՝ հարթ մակերեւոյթ ունեցող քաղաքաց յար եւ նման տեսարան ունի, զրկուած արտաքին տեսիլներէ պարիսպին պատճառաւ որ կը կտրէ իւր յարաբերութիւնն արտաքինոց հետ, չորս դուռ եւ եթ թողլով իբր անցք, այն է Լեւոնդուր ընդ հիւսիսային արեւմուտս, Նոբոն ընդ հիւսիսային արեւելս, Մարտինի ընդ հարաւ, որ կը տանի ի Պաղատտ, եւ Հոսմոն ընդ հարաւային արեւմուտս որ կը տանի ի Հալէպ եւ ի Փոքր Ասիա։ Հարթածաւայ տափարակի վրայ իբր 80



կանդուռն բարձր հաստակաւոյց պարխաւն որ հին ժամանակաց համար մեծ կարեւորութիւն ունէր, արդի ռազմագիտութեան առաջ իւր նշանակութիւնն կորուսած լինելով անխնամ թողուած է եւ խաւառ քանդելու իսկ փախաք կը տիրէ, զի նա է գլխաւորաբար քաղաքին օդոյ վատառողջութեան պատճառ, իբր արգելիչ արտաքին թարմ օդի հոսանաց: Բայց կարելի չէ ուղեւորի մը անտարբեր դիտել այնքան մեծածախ շինուածք մը, համակ քարակուռ 15 մէթր լայնութեամբ որ իւրաքանչիւր 40 մէթր գլուխ ունի մէկ մէկ ընդարձակ շտեմարան, տեղի արմատաց եւ զինուոց եւ ռազմամթերաց: Ուրեք ուրեք յունարէն կամ հռոմայեցի արձանագիրք կ'երեւին պարսպին վրայ, որոց միոյն համար տեղացիք կը պնդեն լինել «Տիգրան թագաւոր Հայոց», բայց ես չկարացի հաւատ ընծայել, զի պարսպին հայկական ձեւակերտ լինելն բնաւ հաւանական չէ: Տիգրանակերտի բոլոր տեսարանն դիտելու համար կա՛մ պարսպին կա՛մ մզկիթի մը աշտարակին վրայ ելնել հարկաւոր է, զի քաղաքն հարթ մակերեւոյթի վրայ լինելով ոչ ուրեք կարելի է փողոցներու կամ տանիքներու մէջէն բոլոր երեւոյթներն դիտել: Երկուքին վրայ եւս քարձրանալով դիտեցինք մենք բոլոր քաղաքին տեսարանն որ եռանկիւնի ձեւ մի ունի նուազ սուր ծայրով: Պարսպէն ներս չկայ բնաւ պարտէզ կամ ծառատունկ, այլ պարսպէն դուրս Տիգրիսի եղբրը այնքան առատ որ աննման ածանութիւն ունին ամեն տեսակ մրգեղէններ: Իսկ սեխ եւ ձմերուկն արդէն անուանի են յոյժ, մանաւանդ վերջինն 50-60 օխա ծանրութեամբ կը մեծնայ երբեմն եւ կը վաճառուի ոչ հատով, այլ մսի պէս կը կտրուի եւ ուղուած չափով կը տրուի: 20 փարս արծաթ ձմերուկ մը ոչ որ կարող է միայնա՛յ սպառել գրեթէ: Արմտեաց եւ ամեն հողագործական բերքերու գինն խիստ աժան է ի Տիգրանակերտ սովորական տարիներու մէջ քան ի Խարբերդ, ի Բալու, յԱրապկիր, յԱլին, յԵրզնկա, ի Վարին, ի Վան, ի Բաղէշ եւ նոցա սահմանակից քաղաքներն ու աւաններն: Խիստ առատութեամբ կը հասնի եւ բրինձ որ յիշեալ դաւառաց մէջ չբուսնիր սակաւ բացառու-

թեամբ (մի քանի դիւղեր ի Բալու եւ ի Քարբերդ): Բաց ի հողագործական արտադրութիւններէ նշանաւոր է Տիգրանակերտ նաեւ արուեստական արտադրութեանց մէջ: Մետաքսի թել մանեղէն զկնի (խողակ ի թել վերածել) կը հիւսուին կամ կը գործուին անտ մետաքսեղէն խիստ նուրբ գործուածներ, զանազան տեսակ եւ զանազան պիտոյից համար: Գլխաւորապէս Տիգրանակերտի աւելտրական կենդանութեան պատճառն այդ է, զի ուրիշ շատ քաղաքաց պէս լոկ եւրոպական վաճառաց միջնորդութեամբ չգրադուիր: Իսկ կտաւեղէն եւ բըրդեղէն գործուածներն աւելորդ է յիշել, զի ուր մետաքս կը գործուի, ագնց համար այլ եւս ըսելիք չմնար: Նոյնպէս զանց կ'ընենք յիշել եւ միւս հասարակ ու սովորական արուեստներն:

Տուներն համակ քարակերտ են երկու եւ երեք յարկեայ: Բոլոր քարերն սեւ եւ ջերմութեան լաւ հաղորդիչ լինելով ամառ ատեն կարելի չէ ներքստիակ ապրիլ, այնքան որ հեղձուցիչ է օդն: Ուստի պարտաւորեալ են բոլոր բնակիչներն բացօդեայ պառկիլ տանիքներու վրայ յատուկ դահաւորակներու մէջ որ ձերմակ սաւանով կը շրջապատին չորս կողմէն անտես մնալով արտաքուստ: Այդ բանին, բաց ի ջերմութենէ որ ըստ Կելվինսի մինչեւ 40 աստիճան կը բարձրանայ, պատճառ է նաեւ թունաւոր եւ խայթիչ օձերու ու կարիճներու անսովոր բազմութիւնն որոց ամեն տարի ստուար զոհեր կը մատուցանեն միշտ:

Օդոյ այդ սաստիկ տաքութիւնն բարեխառնելու իբրեւ միջոց կը գործածուին բարեբաղդաբար գրեթէ մեծ մասամբ տանց մէջ դրոնուած աղբիւրներն, խողովակներով քաղաք բերուած, որք շատրուանի ձեւով աւազաններ կազմած կը զովացունեն բնակիչներն, որք ընդհանրապէս կը զովանան յաճախ նոցա մէջ: Սակայն խմելու բոլոր ջուրերն նուազ մաքուր եւ անոյշ են:

Հոյակապ շէնքեր անձանօթ չեն ի Տիգրանակերտ, որ հասարակաց շէնքեր, մասնաւորաց տներ, մանաւաղ մզկիթներ եւ եկեղեցիներ: Ամենէն նշանաւոր կրնայ համարուիլ Ուլւ-Ճաֆ կոչուած մեծակառոյց մզկիթն, որ Հերակլ կայսեր յանուն Ս. Աստուածածնայ լինած եկեղեցին կարծուի լինել,



Հայոց Ա. Կիրակոս եկեղեցին որ դեռ մօտ տարիները չինուած է եօթն խորանով ու խիստ հրաշալի գանդատնով: Հայոց միւս եկեղեցին Ս. Սարգսի նուիրուած է:

Արեւելեան տիպ ու երեւոյթ ունի Տիար-պէքիր մանաւանդ բնակչաց զանազան երեւոյթներով: Բացի կառավարական զինուորական պաշտօնէից եւ սակաւաթիւ հայ ութուրք եւ այլ ազգաց պատկանող անձերէ որ եւրոպական ճաշակով կը հագուէին, մընացեալ բոլոր ժողովուրդը քառս մի կը ներկայէ բազմադան տարազու, ճաշակի, սովորութեան եւ գաղափարի. նոյնպէս յոյժ այլազան կրօնքներ եւ լեզուներ կը տիրեն աստ: Յաւէտ կամ նուազ տարբերութեամբ կամ առաւելութեամբ կը խօսուին Թուրքերէն, Հայերէն, Արաբերէն, Յունարէն, Քուրդերէն, Քաղղեարէն, Ասորերէն, Լատիներէն (Լատին կրօնաւորներ կան) եւ. կը գտնուին նաեւ ոմանք ծանօթք Փրանսերէնի կամ մի այլ եւրոպական լեզուի. կը խօսուի նաեւ եբրայեցերէն, զի հրեայ բնակիչներ ալ կան, եւ այս ամեն լեզու խօսող ազգերն, բացի եւրոպական տարազի տակ միեւնոյն երեւոյթ ունեցողներէն, կը զանազանին իրարմէ զգալի տարբերութեամբ եւ այդ է արեւելեան քաղաքաց միակ յատկանիշը:

Մահմետական, Հայ-լուսաւորչական, Բողոքական, Կաթոլիկ, Նեստորական Ասորի, Կաթոլիկ Ասորի, Յակոբիկ Քիլտանի եւ Մովսեսական կրօններն ունին ի Տիարպէքիր իրենց հաւատացեալներն եւ իւրաքանչիւրն իւր աղօթատեղին, ոմանք նաև վարժարան, բայց այդ վերջիններն անմխիթարական վիճակի մէջ: Կը գտնուին նոյնպէս օրթոտոքս Յոյներ իրենց եկեղեցիով:

Ժողովուրդը կը հաշուուի լինել 40-50 հազար, յորոց իւր 2000 տուն հայ. մեծաւ մասնութիւնը մահմետականաց կը պատկանի: Առեւտրական եւ արուեստական գրեթէ բոլոր ձեռնարկութիւնք ըստ մեծի մասին Հայոց սեպհական են: 1500 է աւելի խաւութ պարունակող վաճառատունն մասնաւորապէս յիշատակելի չքեղ չէնք մի չէ, այլ մութ ու անձուկ է ինչպէս որ ընդհանրապէս անձուկ եւ նեղ են քաղաքին բոլոր փողոցները, յաւէտ ընդունակ ցէխի ու աղտեղութեանց եւ մշտնջենաւոր բնակա-

րան ջերմի զանազան աստիճանով եւ այլ հիւանդութեանց ու ախտից: Նշանաւոր է մասնաւորապէս տարեւոր վէրքն որմէ անգերծ են բոլոր բնակիչները:

Ժողովրդեան բարոյական եւ կրթական վիճակին վրայ շատ բաներ չունիմ գրելիք, զի չկարողացայ ընդարձակ տեղեկութիւններ ստանալ, բայց այոքանը վճռակի կարող եմ ըսել թէ կրթական վիճակը Հայոց մէջ մասնաւորապէս յոյժ աննախանձելի էր, եւ չկար գէթ ոչ մի գոհացուցիչ վարժարան: Աղգային կացութիւնն նմանապէս գոհութիւն չէր կարող պատճառել, զի կուսակցական անհամաձայնութիւնք Փիլիպպոս Ե. պիսկոպոսի ժամանակէն ի վեր կը տիրէին տակաւին թեթեւ մեղմութեամբ եւ չկար ոչ Առաջնորդ, ոչ Առաջ.Փոխանորդ կամ Տեղապահ:

Կառավարութեան կողմանէ բացուած «Մէքթէպը Բուշոյէի ասքէրիյէ» անուն վարժարանն յատուկ չէնքի մը մէջ՝ մասնաւոր գոհունակութեան արժանի էր թէ՛ աղնիւ տեսչին ջանից ու աշխատութեանց արդիւնքով, որ բարեկիրթ զինուորական մ'էր երիտասարդ ու յոյժ մեծ սիրով ու քաղաքավարութեամբ կ'ընդունէր այցելուներն, որպէս եւ զմեզ, եւ թէ՛ վարժարանին մէջ տիրող անխտրութեան պատճառաւ որով ամէն ազգէ եւ կրօնէ աշակերտ կ'ընդունուէր եւ կը խնամուէր կատարեալ հաւասարութեամբ: Ասոր փոքր ինչ նմանող վարժարան մը տեսած եմ մէկ մ'ալ ի Մամուրէթ-իւլ-ափիզ (Մէզիրէ Քարբերդի) եւ ոչ այլ ուրեք ի կուսակալանիստ քաղաքաց ընդ որս չըջած եմ:

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԵՐՐ ԶԻՍ ՏԱՆԻՆ...

Երբ զիս տանին ի հանդըստոց Այն ծանրաքայլ եւ քօղածիգ երեսօք Դամբանական յուզարկաւորքն, Որոնք շիրմաց եւ թաղելոց ընտանի՝ Չառնեն ինչ փոյթ անցաւորաց. Երբ դադալի մ'ի ներս դըրուած



Յանձնեն զիս այն օտար մարդկան ,  
 Եթէ զմիտաւ ածես երբեք  
 Զի քեզ մնացի հաւատարիմ  
 Առանց յուսոյ վարձուց յերկրիս ,  
 Եւ եթէ հոռակ յետոյ սըրտիդ մէջ ելնէ  
 Սիրոյ ստուեր մը , — գըթոյ զգացում մ'  
 Իմ աւաղուկ վիճակիս վրայ ,  
 Զանա որ ես մօտիկ ըլլամ :

Կ'ուզեմ տեսնել քու արտասուելիք . . .  
 Ի՛նձ համար քու արցունքը թափելի . . .  
 Իմ անարգեալ գոռոզութիւնս , ուստի այն—  
 քան կըրեցի ,  
 Եւ իմ երկար արտօսը աչացոս եւ սըրտիս  
 Վրէժխնդրութեա՛նս այս կը տենչան :  
 Արդէն 'նդերկար ժամանակաց  
 Ակն ունի այնքոմ սիրտս հանդարտ , եւ չէ  
 Ժամն այն հեռաւոր :  
 Ի՛նչ արշալոյս չողջողենի  
 Ինձ կ'երեւի արեւմուտս այս .  
 Ի՛նչպէս պատրաստ եւ խաղաղիկ  
 Նըմա սպասէ եւ զայն տարիմամբ միտք իմ  
 Դիտեն :  
 Եղար կարի իմն յոյժ խըրոխտ . — այժմ  
 Եթէ դու յաշխարհիս  
 Փախչիս յինչն , գէթ ի յետին ճանապարհին  
 Զանա որ ես մօտիկ ըլլամ :

Մի՛ մըտածեր որ հոն փակուած , ցուրտ  
 եւ անշունչ ,  
 Ես քեզ չըլլամ ականջալուր  
 Եւ քու վայրկեանքդ ունայնափա՛ր կորսւելին .  
 Զի , թէ մեռեալք հոս անշունչ են եւ  
 ցուրտ՝  
 Յայն սակս է լոկ զի կան ի լուր .  
 Եւ աւելի , ե՛ւս աւելի ,  
 Քան երբ զարեւ կը տեսնէին , կը լսեն ի—  
 րենց սիրելեաց :  
 Ո՛րչափ խըղճի դառն խայթեր ,  
 Քանի՛ սիրոյ գութ տարածամ՝  
 Իրենց տամուկ գէջ անկողնէն  
 Կը նըկատեն այն անբարբառքն . որ է միակ  
 կըծու արտօնանք ,  
 Հանդուցելոյ սըրտի մ' — յետին մընացուած :  
 Յիշէ՛ , յիշէ՛ , ո՛հ , եւ ի նիւն առաւօտու  
 Զանա որ ես մօտիկ ըլլամ :

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եկեղեցին էր խաւարչուտ . լայնածաւալ , միակերպ  
 Կը բացուէր իմ առջեւս անջրպետն ի մէջ սեանց .  
 Քառաթեւ խաչ մ' ի խորըն բարձրաբերձ , ահագին :  
 Այն երկայն կամարաց մէջ չէր լըսուեր ձայն բար—  
 բառոյ ,  
 Լոկ մըրմունջ մի սոսկ Լեթ , իբրեւ թեւոց շառաչիւն ,  
 Կը հըծծէր ի յետոյ կողմ՝ խոստովանողին վանդակաց :  
 Ի՛նչպէս չըքնաղ էր աղջիկն այն . գեղատեսիլ  
 Կերպարան  
 Վեշտասան տիօք ամաց . տեսչոյ միայն ես նորա  
 Կիսադէմքն դեռափթիթ , Լընդ քողոյն հովանեաւ  
 Խաժակըն երկնագոյն գուշակեցի բիքս աչաց .  
 Այլ սակայն . . . կը խօսէր երկար բանիւք , Լ խորհուրդ  
 Ի միտս իմ ծագեցաւ թէ՛ նա մեծ մեղք մի յայտնէ :  
 Ինչպիսի՞ մեղք արդեօք . նա ինքն ա՛յնպէս եր—  
 կիւղած  
 Ա՛յնպէս ճիղմ՝ նորահասակ : Դարձայ ես յայնքոմ  
 Ժամու  
 Դեպ՝ առ հայր խոստովանութեան . էր նա այնօք  
 Ժերուհի :  
 Սրահայեաց ունէր աչկունք , Լ գունաթափ բնաւին  
 Ունկընդիր լինէր լըսիկ , հիւժեալ ծնեգեալ Լ վրտիտ  
 Դաստակներն՝ իւր ծուռնկերուն վերայ կըցեալ ձեռ—  
 նալմած :

Ինչպիսի՞ մեղք արդեօք , ինչպիսի՞ մեղք նորալուր  
 Կըսէր քեզ : Դու որ անդոյր ունկըն դնէիր Լ խաղաղ  
 Սնծանօթ յանցանաց հարիւրաւոր սըրտերու ,  
 Ի՞նչ գաղտնիք այժմ՝ արդեօք խըրճնաճաճուկ կամ  
 անոյշ  
 Մերկացաւ քեզ աղջիկն այն որ նըմա չես ընձեռեր  
 Եւ ոչ իսկ դոյզն ինչ խօսք քու վաղընջուց ճառերէն :  
 Հուսկ ուրեմն կը լըուէ ինքն օրիորդն , արդ թերեւս  
 Անմոռունչ արտասուաց լըքանէ զանձն թողու ,  
 Սպասելով կը սպասէ ըստփանաց բարբառոյ  
 Եւ ձայնի մ'որ տայ նըմա խաղաղութիւն Լ ներուճ .  
 Այլ սրակնեայ ակնողեօք եւ ալեւոր ծերունին  
 Արդարեւ կ'ուզէ խօսիլ , բայց . . . կը կենայ անշընչուչ :

Մանկական երկիւղներ , սըրտի թընդիւն եւ երկ—  
 ուանք  
 Երբեմն ինքն եւս ունեցաւ . գարնանային օդն հեգիկ  
 Կը դառնայ առ նա անդրէն եւ տակաւին գըտանէ  
 Եւ կը զգայ պատանեկի իւր եռանդուն այն ոգին . . .  
 Քանի՞օ՛ն մանիշակաց եւ շուշանաց վերշնջմունք  
 Ծածկէր , դեռածաղիկ , քու բարբառոյ ձայնիդ մէջ :  
 Հուսկ յետոյ արթնցաւ ծերն , հուսկ յետոյ Լ՛րս  
 դողդոջ  
 Կանգնեցաւ Լ առ խարխափ կ'իջնէ ի վայր աւասիկ .  
 Յանուն Տեառն Աստուծոյ զխոնարհամիտ օրիորդն  
 Օրհնէ աղնւագութ թալուրներովն սիրոյ ,  
 Թոթովեց յետոյ ուրեմն աղմկայոյզ երեսօք  
 « Գընա՛ , ինչպէս որ ես . . . ըզքեզ պահէ անարատ » :  
 Գ.ԻԿՏՈՐԻԱ Ա.ՂԱՆՈՒՐ (\*) Թարգմ. ԱՐՄՈՒԿԵՍ  
 Հայաստան

(\*) Սա եւ իւր քոյրն՝ Հերնէն , նշանաւոր քերթողք  
 են իտալական արդի բանաստեղծութեան մէջ , եւ  
 երկրորդն եւս իրենց երգերովն անցած ընտիր ծաղկաւ .



## Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԿԱՌԱՓՆԱՏԵԼՈՅ ԳԼՈՒԽԸ

Տղթոր Լինեիեր հետեւեալ շահագրգիռ յօդուածն հրատարակած է « Ֆիկարո » ի մէջ կառավարչական գլխոյն վրայ .

Յառաջագոյն, երբոր Փարիզի Բժշկական Ճեմարանն իւր ձեռաց տակ ունենար գլխատեղի մը մարմինը, բժիշկը կը շատանային միայն անոր Դիւանագրութիւնն ընելով, այսինքն պարզ անդամաղնուծութիւնը : Կը բաւականանային արձանագրելով մարմնոյն կենդանական գլխաւոր կեդրոնաց, ինչպէս ուղեղին, սրտին, թոքերուն վիճակն, եւ ասպա գլխատեղոյն գլխոյն կազա-

քաղի մը մէջ — « Բանաստեղծութիւնը ժամանակակից հեղինակաց » —, հրատարակեալ ի Լիբսիա ի ձեռն Չիամբոյի երեւելի վիպասանին ի ճաշակ Գերմանացոյ : Վիկտորիա եւ Հելենէ, — ունին ուրիշ քոյրեր ալ, բայց եղբայր ոչ, — են թոռուներ Ալա-նուէան Աբրահամու, յիտալիա գաղթած հնդկա-բնակ հայ, եւ Մամի տիկնոջ դստեր ծանօթ Սա-մուէլ Մուրատի . իրենց հօր անունն է Եղուարդ, եւ մայրենին իտալացի է, եւ ամբողջ ընտանեօք տարւոյն մեծագոյն մասը կ'անցընեն ի գեղեցիկ Նաբոլի : Բնակն նաեւ բնակութեան տեղ ի Բատուա, ուր երբեմն կը նստէ իրենց պապն եւ ուր նա եւ իւրենք յառաջագոյն կ'ապրէին . տեաք առատ դրամագլխոյ, ժառանգեալ ի նախնեաց եւ ապահովեալ յանգիստեղան դրամանշանի, լաւագոյն եւ պայծառ կրթութեամբ բարձրնտիր ընկերութեանց մէջ կը փայլին : Երկու քերթողուհիք իտալական ալ ի այլ լրագրոց կամ թերթից մէջ գովութեամբ յիշատակուած են իրենց ուրիշ բանաստեղծութիւններով ալ, մասնաւոր Վիկտորիա . ես միայն վերոյիշեալ ժողովածոյն մէջ եղածները տեսած եմ, գրեալը ժամանակիս ոգւով եւ գաղափարներով, որովք իտալական բանաստեղծութիւնն, թողլով դասական իր հին գաղափարական ոճոյն ձեւը, ինչպէս նա եւ վիպասանականը, նոր կերպարանք մը կուտայ աղնուագունին ի գրականութեան ճիւղի : Առաջի ներկայացուցած երկու տաղերէն զատ, ունի Վիկտորիա նոյն ծաղկաքաղին մէջ նաեւ « Ապստամբութիւն », զոր կը թարգմանենք, և նուազ մը « Երբ ժուռ կուգամ », որու համն առնելու համար պէտք է մէկն Նաբոլիի օգն ծծած ըլլայ : Իսկ Հելենէի երգերն են « Կանթեղ մի », « Առ հատոր մի » : Երկուքն ալ ընդհանուր այս իրենց բանաստեղծութեանց մէջ մեկամարդնու եւ երբեմն կարեւոր սիրտ մը կը ցուցնեն, որուն ես չեմ համարձակիր մտնելու եւ ծածկեալը քողարկելու :

պարը կը հանէին, որ կ'երթար հարստացնել Օրֆիլա թանգարանին հռչակաւոր հաւաքածոյն : Գիակին վրայ կատարուած միակ փորձերն էին վաղանցուկ կերպիւ գրգռել իրանին եւ դիմաց գլխաւոր միանունքն՝ եւ լեկտրական հոսանաց միջոցաւ :

Այսօր, ամեն ինչ փոխուած է : Բայց այս փոփոխութիւն հազիւ երեք տարիէ հետէ կատարուած է, այսինքն 1882 ին մեծահռչակ մարդասպան Մէնըլուի գլխատումէն ի վեր : Ուրեմն Մէնըլուի, Քամբրիի եւ Կամահիւի դիակները բոլորովին նոր փորձերու առարկայ եղած են, որոց մեծ կարեւորութիւնն եւ օգուտը ժողովուրդն չէ ըմբռնած ընդհանրապէս :

Արդարեւ, գործը կը կայանայ սա ահագին խնդրոյն լուծման մէջ. կեանքն, այսինքն գլխակցութիւնն, ցաւը, վայրկեանաբար և բացարձակապէս կ'ոչնչանան իլլյուսթրինի դանակին գործողութեամբ : Ահուհի խնդիր, որուն վրայ երբեք չեն խորհած անոնք որ, վերջին ժամանակներս, զբաղած են ոճրագործները գլխատելու նոր եղանակ մը գտնել :

Գեւ վերջերս, գլխուորական բժիշկ մը, որոյ անունը չեմ յիշեր, Գիպլան հանդէսին զրկեց սոսկալի դիտողութեանց պատմութիւն մը, զորս առիթ ունեցած է ընել ի թոնքին՝ գլխատելոց գլխոյն վրայ : Այդ բժիշկն կատարելապէս հաստատած է թէ, գլխատումէն յետոյ, դիտակցութեան եւ ցաւոյ անժխտելի արտայայտութիւն մը կը շարունակէ քանի մը վայրկեան :

Հատեալ գլուխներու ապրելուն ծանր խնդրով զբաղող առաջին բնախօսն եղաւ Քլոտ Պէրնար : Աւասիկ ո'չք են այն փորձերն զորս կատարեց « Քօլէժ տը Ֆրանս » ի ականաւոր ուսուցիչն : Լաւ սրուած տասաւրով մը յանկարծ կը կարէր շանց գլուխն եւ յետոյ թող կուտար որ արիւնը հոսի :

Հաստատելու համար յայնժամ թէ այսպէս գլխատեալ շանց ուղեղը կորուսած էր իւր կեանքն եւ վայրկեանական գրգռելիութիւնը՝ արեան կորստեան պատճառաւ, եւ թէ այդ կեանքն ու գրգռելիութիւնը գոյութիւն ունէին տակաւին թաքուն վիճակի մէջ, տաք եւ նեարդն հանուած արիւն կը հեղուր շնչերակաց մէջ : Այսպէս արեամբ լեցուն գլուխը կը դրուէր սեղանի մը վրայ



եւ իւր վերսկիւնը ապրիլէ, որովհետեւ, ետին, աջ կամ ձախ կողմը կեցած անձն երբ ձայն տար, շան աչքը իւր դռնապանին յայնի եկած կողմէ: Այս երեւոյթ կը դադրէր, երբ, հա- կառակ խցող մամին, ուղեղը վերստին սլար- սլուած էր: Քլոտ Պէրնար աստի կ'եզրակա- ցընէր, իրաւամբ, թէ գլխատելոյ մը գլուխը այն ատեն միայն կը դադրի ապրելէ երբ ուղեղին ամբողջ արիւնը դուրս վազած է եւ թէ կարելի է նոր կեանք տալ նմա՝ կանո- նաւոր բարեխառնութեան մէջ պահուած բաւական արիւն փոխանցելով: Կը յաւե- լուր թէ «Գլխատելոյ մը գլխոյն վրայ այդ փորձը կատարողը ահարկու եւ սոսկալի տե- սարանի մը ներկայ պիտի գտնուէր»:

1882 ին է որ, Մէնքլու մարդասպա- նին գլխուն վրայ, Տոբթորք Տասի եւ Սաբէ փորձեցին իրականացնել Քլոտ Պէրնարի փորձն, գործածելով արեան փոխանցման նոր միջոց մը, հնարեալ Տոբթոր Լապորտէ, բնախօսութեան բազմաշմուտ ուսուցչէն որ, անկէ ի վեր, կրկնած է իւր փորձերն Քամբրիի եւ Կամաշիւիի գլուխներուն վրայ: Տասի եւ Սաբէ, կենդանի շան մը շնչե- րակներն ուղղակի հաղորդակցութեան դը- նելէ յետոյ կառավարելոյն գլխոյն շնչե- րակաց հետ, կրցան հաստատել իրենց կեն- երեւոյթներ որք այն ատեն մեծ սրտայու- ղութիւն յառաջ բերեն զիտնոց ալխարհին մէջ: Բայց այս փորձերէն անկախաւ ար- գիւնքն վճռական չեղաւ, որովհետեւ, գրե- բաղդաբար, շատ ժամանակ սահած էր Մէնքլուի գլխատման եւ դիակին Բժշկական ձեւաբանի ալխատանոցը փոխադրութեան մէջ տեղ: Դազաղադրութեան եւ կերպա- կան թաղման ձեւակերպութեանց յառաջ բերած յապաղումներն միշտ միակ արգելքը պիտի լինին այդ փորձերուն կատարեալ յա- ջողութեան, ինչպէս որ եղաւ նաեւ Քամ- բրիի եւ Կամաշիւիի գլխատումներէն յետոյ: Ժամանակ է որ, յօգուտ գիտութեան եւ ընկերութեան, կառավարութիւնն հարկ ե- ղած միջոցները ձեռք առնու որպէս զի ոճ- րադործաց մարմինը գլխատումէն անփախ- յետոյ ձեռնհաս բժշկաց յանձնուի:

Ինչ որ ալ լինի, Մէնքլուի, Քամբրիի եւ Կամաշիւիի գլխոց վրայ կատարուած փոր- ձերը ապացուցած են Քլոտ Պէրնարի տե- սութեանց ճշդութիւնը: Արեւիկեանդանա-

ցուցիչ արեան մը փոխանցման ազդեցու- թեան ներքեւ, կառավարութեանց այդ սալի- տակ եւ արտայայտութենէ՝ զուրկ գլուխ- ները քանի մը վայրկեան վերստացած են կենաց ամեն երեւոյթները: Դիմագծերն որք կծկեալ եւ անկապակից էին, վերահաս- տատուած են իրենց կանոնաւոր վիճակին մէջ, արտեւանունը կիսով չափ բացուած են, չրթունքները սարսուած, եւ քանի մը երկվայրկեան յուսացուած է որ ուղեղն իւր հասկացողութիւնն յայտնէ դիմաց շարժում- ներով:

Ուստի կառավարութեանց գլխոյն ապրե- լուն անհերքելի ապացոյցը ժամանակի խըն- գիր մը կը թուի: Մինչեւ որ ամեն ոք ա- պացուցանէ զայդ, ուրիշ բազմաթիւ բնա- խօսաց հետ սա խորին համոզումն ունիմ թէ այդ գլուխները կ'ապրին այնչափ ատեն որչափ կը պահեն իրենց արիւնը: Կիցեթիւնի դանակովը կողովին մէջ գլորած գլուխն կը տեսնէ այդ կողովը, կը լսէ բազմութեան շշուկը, կը հասկնայ թէ իւր մարմնէն բաժ- նուած է:

Անտարակոյս, գլխատման բեմն եղող տաան մահապարտից ութն կատարեալ ա- նասնացման կամ մազնիսացեալ վիճակի մէջ կը գտնուին, ահուելի խեղաեղութեան մէջ կը քայլեն, կատարեալապէս կորուսած են ի- րենց անձին եւ գիրենք շրջապատող իրաց գիտակցութիւնը: Բայց ուրիշներ մինչեւ վերջ կը պահեն կատարեալ պաղարիւնու- թիւն մ'եւ ամբողջական գիտակցութիւն մը: Միւս կողմէ, ծոծրակին վրայ ընդու- նած բուռն հարուածն յաճախ դժուարում մը, զարմացում մ'առաջ կը բերէ որ կը տկարա- ցընէ յաջորդական զգայնութիւնները: Բայց կրնայ պատահիլ որ հարուածն այնքան ա- րագ լինի, հատումն այնքան շուտ, որ ու- ղեղը ժամանակ չունենայ չփոթելու իւր պաշտօնի ընթացքին մէջ:

Վերջապէս, ինչ որ լինի ուղեղին վիճակն այն բոլորին ուր վայրկեանաբար կը բաժ- նուի մարմնէն՝ զոր կը կառավարէ, այդ զօ- րեղ ու փափուկ գործարանը չկրնար յան- կարծապէս դադրիլ ապրելէ: Կը կրկնեմ, այն բժիշկներն՝ որոցմէ բաղկացեալ է՝ կը պահեն իրենց գրգռելիութիւնն եւ հետե-ւաբար իրենց պաշտօնն այնչափ երկար ա- տեն որչափ արիւնն որ կը թրջէ զանոնք,



թոյլ կուտայ իրենց սննդական փոխանակութիւններն :

Այդ ժամանակն որչափ կը տեւէ : Կարելի չէ հաշուել զայն մաթեմատիքական ճշդութեամբ, բայց եթէ ի հաշիւ առնուի ուղեղին ծայրագոյն կնճռոտութիւնն ու նրբութիւնն, եւ եթէ մտածուի թէ արեան հոսումը երկար կը տեւէ մանաւանդ փայտի «գոյն»-ին պատճառաւ որոյ մէջ կ'ընայ կառավարողական գլխիկը, կարելի է քանի մը վայրկեան հաշուել այդ ժամանակը :

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ք Ա Ն Ի Մ Ը Խ Օ Ս Ք

ՆԵՎՐՈՒԶԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երգ կը հասնի դարնան գիշերահաւասարը, Պարսիկները կը տօնեն իրենց Նէվրուզն :

Ֆերվերտան Ման ճէլալի առաջին օրը, այսինքն երբ արեգակը խոյի աստղատուներ կը մտնէ, կը կոչուի Նէվրուզի-ամմէ, այսինքն ժողովրդական Նէվրուզ, իսկ անկէ վեց օր յետոյ կուգայ արդարեւ կամ պարսկական Նէվրուզն : Այդ օրն ինչո՞ւ Նէվրուզ կ'անուանուի, այդ մասին կան զանազան աւանդութիւններ, ի մէջ այլոց եւ հետեւեալն :

Պարսից Ճէմիտ Շահը (Սրաբացիք Մենուշէն կ'անուանեն զայն), Փիղատեան հարստութենէն, ճանապարհորդելով իւր տէրութեան մէջ Ատրպատական կը հասնի : Տեղւոյն բնութեան կ'սքանչանայ եւ կը հրամայէ որպէս զի այնտեղ փոխադրուի իւր լաթուն, որ թանկագին քարերով զարդարուած էր, երեսն դէպի արեւելք : Այստեղը Բայ-Մկեար կոչուեցաւ : Ճէմիտ Շահն հագաւ իւր թանկագին քարերով զարդարուած արքայական զգեստն եւ նստաւ գահի վրայ . այս դէպք տեղի ունեցաւ դարնան առաջին օրն : Երբ ծագեցաւ արեգակն եւ լուսաւորեց զայն ու նորա վրայ գտնուած թանկագին քարերը, կարծես թէ գերբնական լուսով մ'ողողուած էր : Ժողովուրդն, որ կը դիտէր զայս տե-

ւարան, բացառանչեց . « Նէվրուզ է այս », այսինքն նոր օր, երկու արեգակ — մէկն արեւմուտք, միւսն արեւելք : Այս Շահի անունը մինչեւ նոյն ժամանակ ճէմ կը կոչուէր, իսկ այն ժամանակ շէր (փայլուն) մակդիրն ալ կ'աւելցնեն, այնպէս որ այնուհետեւ Ճէմիտ այսինքն Փայլուն Ճէմ անուանեցաւ :

Պարսից « Նամէյ Խէսթէվան » պատմութեան մէջ ըսուած է թէ Ճէմիտի այդ դահն անփոխադրելի էր եւ ժայռի մէջ քանդակուած առիւծներու եւ այլ զազանաց պատկերներով, եւ մինչեւ այժմ այդ Բայ-Մկեար տեղն կը մնան պալատի աւերակներն ճարտարապետական քանդակներով : Մի եւ նոյն պատմութիւնը կ'ըսէ թէ Պիլթա-գորոս փրկստփայն, որ ժամանակակից էր Ճէմիտի, այս վերջնոյս համար «սո՞նուագարանը շինեց : Այս ժամանակ սկսաւ գինւոյ գործածութիւնը, խնացան երկաթ եւ այլ մետաղներ գտնելու հնարն (մինչեւ այն ատեն զէնք եւ այլ գործիքներ քարէ եւ գաւազաններէ կը պատրաստէին) . վարպետութեամբ մանելու եւ կտաներ ներկելու այլ եւ այլ տեսակները գիտցան եւ եւ : Վերջապէս Ճէմիտ ժողովուրդը չորս դասի կը բաժնէ : Գիտնական կամ ուսեալ, գինուորական, երկրագործ եւ արհեստաւոր :

Գինւոյ գործածութեան մասին հետեւեալ առասպելն կը պատմուի .

Ճէմիտ խաղող շատ կը սիրէր . անգամ մը կը հրամայէ որ խաղողը ամաններու մէջ պահեն : Քանի մ'անօթներու խաղողն կը փչանայ եւ կը թթուի . Ճէմիտ կը հրամայէ ույն անօթներու վրայ դրել Խոյն վերնագիրն : Անգամ մ'սպասուհիներէն մին կ'ուզէ ինքզինքն թունաւորել, ուստի կը խմէ ամանի մէջ գտնուած գինւոյ հեղուկէն, մեռնելու համար . կը գինովնայ, բայց յետոյ բոլորովին ողջ կ'արթննայ . այս պատճառաւ այս հեղուկի անունը դրին Շահ-Բարս, այսինքն արքայական դեղ :

Ժողովրդական Նէվրուզէն վեց օր յետոյ Ճէմիտ նորէն ժողովեց բոլոր իւր հպատակներն եւ այս օրն ալ կոչուեցաւ Նէվրուզի Խաստէ, այսինքն պաշտօնական Նէվրուզ : Այդ օրը Ճէմիտ դառնալով իւր հպատակներուն կ'ըսէ . « Ըստ որում ամենաբարձրեալն Աստուած ստեղծելով մեզ զանազանեց



միւս կենդանիներէն եւ տուաւ մեզ գիտակցութիւն եւ խելք, ուստի մենք պարտաւոր ենք սիրել մաքրութիւնը, լուացումն կատարել, ծխել եւ եւ, եւ ամենաբարձրեալ Աստուծոյն իւր բարեգործութեան համար գոհութիւն մատուցանել» : Այն ժամանակէն մինչեւ այժմ Պարսիկները Նէվրուզի օրը լուացում կը կատարեն, անուշահոտ իւղերով կ'օծեն զիրենք, կը ներկեն եղունգներնին, մօրուքնին եւ տօնի հագուստ կը հագնին :

Այս օրը Պարսից Շահն ազատութիւն կը շնորհէ այլ եւ այլ բանտարկեցող, խակ պարսիկ բանաստեղծները զանազան բանաստեղծութիւններ կը յօրինեն ի պատիւ Շահին : Ասկէ զատ հոգեւորականութիւնը կը պատմէ թէ այն օրը բոլոր մոլորակներն իրենց ընթացքն սկսան եւ բոյսերն ծնունդ առին . այդ օրն Նոյ նահապետ ելաւ տապանէն, Աբրահամ թողուց կռապաշտութիւն, Յովսէփ ազատեցաւ բանտէն եւ Մուհամմէտ Մէքքէի մէջ կործանեց Լաշի եւ Մանաշի արձանները : Նոյնպէս կը պատմեն թէ մարգարէն անցաւ տեղէ մը, որ լի էր ոսկերօք . աղաչեց Աստուծոյ, որպէս զի այդ ոսկրներ կենդանանան եւ նորա աղօթք ընդունելի եղաւ Աստուծոյ . այս հրաշք Նէվրուզի օրն տեղի ունեցաւ : Այս ոսկորներ կը պատկանէին ժողովրդի մը զոր Աստուած երկնաւաք ժանտախտով ոչնչացուցած էր : Այս օր էր որ Ալի առաքին անդամ նստաւ խալիֆայական աթոռի վրայ :

Նէվրուզի ժամանակ իւրաքանչիւր չորեքշաբթի այսինքն չորս չորեքշաբթի շաբաթականաբար, կանայք կ'երթան քաղաքէն դուրս եւ երեկոյեան խարոյկ կը պատրաստեն եւ երեք անգամ անոր վրայէն կը ցատկեն ըսելով . « Այս տեղ կրակին մէջ կը թողում իմ բոլոր թշուառութիւններս » : Իսկ փոքրիկ մանկունք չըջելով իրենց դրացիներու եւ բարեկամաց տունները, հետեւեալ երգը կ'երգեն .

Կը մօտենայ գարունը,  
Կ'երեւին ծաղիկները  
Մարգերու վրայ .  
Քիչ մը բան տուէք մեզ,  
Կը շնորհաւորենք Ձեզ Նէվրուզ,  
Մեզ Մոլլան կ'սպասէ ելն ելն :

Տուններու մէջ կը պատրաստուի « Խոնջա », այսինքն զանազան քաղցրեղէններով, հէ-

շայով, օշարակով, միրգերով պատրաստուած սեղան, կը շինեն « Բաբլէ » զոր հետեւեալ կերպով կը պատրաստեն . փոքրիկ հողով լի ափսէներու մէջ ցորեն կամ գարի կը ցանեն, ցորէնը ծիւեր կ'արձակէ եւ գեղեցիկ կանաչ կը կազմէ . այսպէս կը դնեն սեղանի վրայ զարդի համար : Իւրաքանչիւր այցելուն ամենէն առաջ վարդի ջուր կը ներկայացնեն : Տօնախմբութիւնը երեք օր կը տեւէ : Այս միջոցին գերեզմաննոց կ'երթան եւ ննջեցեալներու գերեզմանաց վրայ ուռենույ ճիւղեր կը տնկեն, զարդարուած ոսկեղօծ թուղթերով, եւ գերեզմանաց վրայ միրգեր կը սփռեն :

## Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

27 ԱՊՐԻԼ - 4 ՄԱՅԻՍ 1885

### Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ըստ վերջին հեռագրաց, Ռուսիա բողոքովին չհաւանիր ի Լոնտոն որոշուած ուսուցչաֆրան սահմանադրին : Ռուսիա կը հաւանի թողուլ զՋուլֆիքեար, այսու ռազմագիտական մեծ զիջում մ'ընելով, ըստ որում Ջուլֆիքեար կը փակէ ճանքան որ կը տանի Հէրադ . բայց ի փոխարէն Ռուսիա կը պահանջէ բազմաթիւ արօտավայրեր իւր հալատակութեան ներքեւ մտած թիւրքմէն խաշնարած ցեղերուն համար :

—Անգլիոյ Երեսփոխանաց ժողովն երրորդ ընթերցմամբ քուէարկեց « Երեսփոխանական աթոռոց վերաբաշխման եւ ընտրական չըջանական վերակազմութեան » օրինական ծրագիրն, որ ամբողջացուցիչ մասն էր յառաջագոյն քուէարկեալ « ընտրական իրաւանց ընդարձակման » ծրագրոյն :

—Անգլիոյ ընդդիմադիր կուսակցութիւնը կը պատրաստուի Նախարարութեան ընթացքը քննադատել աֆրանեան խնդրոյն մէջ :

—Բեդրասպուրկի պաշտօնական թերթը մայիս 3 թուով հրատարակեց կայսերական հրովարտակ մը ուղղեալ Ազնուական դասուն, ծանուցանող թէ, ի նկատ առնելով



այն ծառայութիւնները զորս Անդուականութիւնը մատուցած է Կայսերական Գահուն, Ձարը կը բարեհաճի հաստատել Հանրային Պանքա մը, ներդրեան մէջ մնացած ազնուական կալուածատեարց օգնութեան հասնելու յատուկ նպատակաւ: Կատարինէ Բ. կայսրուհին 100 տարի առաջ հրամանագիր մը հրատարակած էր հաստատելով ռուս Անդուականութեան արդի առանձնաշնորհումներն: Այդ հրամանագրոյ հարկերամեակը տօնուերու առթիւ է որ արդի Ձարն հրատարակեց վերոյիշեալ յայտարարութիւնն որով Կայսրութիւնը նոր շնորհ մը կընէ ազնուական դասուն:

—Անգլիոյ Երեսփոխանական Ժողովոյ մայիս 12ի գիշերուան նստին մէջ, Լորտ Համիլդընի հականախարարական առաջարկը մերժուեցաւ 260ի դէմ 290 ձայնիւ, և 11,000,000 ոսկւոյ վարկը քուէարկուեցաւ երկրորդ ընթերցմամբ:

—Դոկտ. Կոմսը Խրիմէն մեկնեցաւ, ըստ ոմանց Բեդրսպուրկ վերադառնալու, ըստ այլոց Ռիպան (Մոսկուայի մօտ) իւր կալուածներ երթալու համար:

—Ձօրապետ Կոմս Լորիս-Մելիքով, որ Նիցա (հարաւային Ֆրանսա) կը գտնուի այժմ, Ռուսիա կը վերադառնայ պատերազմական բարձր պաշտօն մը ստանձնելու:

—Տեյլէ Նե-լ կը ծանուցանէ թէ Ռուսիա պատրաստութիւն ցուցած է բացարձակ ապահովութիւն տալու թէ միտք չենեցած գրաւելու զՀէրաթ և ապագային մէջ ալ չուզեր գրաւել:

—Ձէյնոյ ռուս զօրավարը Տիգրիսէ Լոնտոն կը զրկուի ռուսօ-աֆղան սահմանաց գծման գործին աջակցելու:

—Լուր կայ թէ Լըմոտէն զօրավարն հրաժարական տուեր է, դժգոհ լինելով Պ. Կլապսթոնի նախարարութեան թոյլ և տկար ընթացքէն, որ միշտ պզտիկ կը ձգէր իւր ներկայացուցիչն, եւ գիշում կընէր Ռուսիոյ պահանջմանց:

—Անգլիական վերջին լրագիրք կը ծանուցանեն թէ Վիլհէլմ Կայսրը չուզեր իրաւարար կամ միջնորդ լինիլ, եւ թէ այս պաշտօն Պեճիոյ Լէօբուլտ Թագաւորին պիտի առաջարկուի:

—Անգլիոյ ծովային գործոց նախարարութիւնն հրաման տուաւ դադարեցնելու

նոր մարտանաւուց չինութիւնը:

—Ռուս կառավարութիւնն, որ շատ մը ծովառումը յանձնարարած էր Պէրլին, ետ առեր է իւր հրաման:

—Չինաստան Անգլիոյ հետ պիտի դաշնակցի, կըսէ Թայֆ, եթէ Ռուսիա յարձակի Աֆղանստանայ վրայ, զի ադով միանգամայն կը սպառնայ չինական հողին:

—Պիզմարք իշխանին երէց որդի Հէրպէրթ Կոմսն արտաքին գործոց նախարարութեան խորհրդական անուանեցաւ:

—Գայթակղայից տեսարաններ անպակաս են միշտ Խրուաթաց խորհրդարանին մէջ որ յԱկրամ: Վերջին նստին մէջ Տոթթ. Սթար. սեւիչի արմատական կոսակցութենէն անգամը ոմանք բացորոշապէս յայտարարեցին որ «եթէ Հապսպուրկի Կայսրութիւնը չգահացնէ Խրուաթաց պահանջքը, Ռուսիա և Ձարն անշուշտ կը գոհացնեն»: Նահանգապետը պատասխանեց թէ այսպէս խօսող Պարոններէն ո՛չ ո՛ք պիտի յանդգնէր այդ խօսքերն արտասանել փողոցի մը մէջ, կամ ո՛ւր որ օրինաց թեւը կրնար հասնիլ իրենց և հետեւապէս Ժողովոյն անընաբարեկիութիւնը չարաչար գործածելու վրայ էին այդ տեսակ լեզու մը գործածելով:

—Մատրիտի եւ Սպանիական ուրիշ գլխաւոր քաղաքացի թաղային և քաղաքային ընտրութեանց մէջ Սպանական քաղթանակ տարին կաթոլիկ պահպանողական Նախարարութեան ընտրելեաց վրայ: Երեսփոխանական ընտրութիւնք ի մօտոյ պիտի կատարուին եւ նախարարութիւնն ամենուրեք, մանաւանդ գիւղօրէից մէջ, յայտնապէս կը պաշտպանէ իւր ընտրելիներ, եւ սպառնալեօք կամ հրապուրանօք կը մղէ Ժողովուրդն անոնց քուէ տալու:

—Կալկաթայէ քաղաած հեռագիր մը կը ծանուցանէ ճիշդ թիւն այն զինուց եւ ռազմավարութեան գործը Հնդկաստանի կառավարութիւնը նուիրած է Աֆղանաց Էմիրին և հեզհետէ Աֆղանստան կը զրկէ-10,000 հեծելազօրաց հրացան, 10,000 անգլիական հրացան, ամենքն ալ նոր զրութեամբ, 30 միլիոն փամբուշտ, 17 լեռնային թնդանօթ և շատ մը զգեստեղէն:



## Ն Ե Ր Ք Ի Ն

Վեհ. Սուլթանը տեղեկանալով որ Յու- նաց Պատրիարքարանը դրամական անձուկ կացութեան մէջ կը գտնուի, բարեհաճե- ցաւ 2,000 Օսմ. ոսկի նուիրել:

— Դատական նախարարութիւնը նկա- տողութեան առնելով Կ. Պոլսոյ Առեւտրա- կան Սենեկի մէկ տեղեկագիրը սնանկու- թեանց մասին, հրաւիրեց առեւտրա- կան դատարաններն որպէսզի այսուհետեւ յիշեալ Սենեկին յղեն ո՛ր եւ է խնդրագիր որ կը ներկայացուի սնանկութիւն հրատա- րակելու համար:

— Յայտնի է թէ անցագիր ստանալու համար երկար ձեւակերպութիւններ կան, որոց պատճառաւ յաճախ ֆլասուց կեն- թարկին այն վաճառականը որք իրենց գոր- ծոց պահանջմամբ յանկարծ ձանրորդելու հարկին մէջ կը գտնուին: Առեւտրական Սենեակը նկատողութեան առնելով զայս խըն- դիր, ձեռնհաս իշխանութեանէն խնդրած է որ այս ձեւակերպութիւնը պարզ ձեւի մը վերածուին վաճառականաց համար եւ այս վերջինը անցագիր ստանալու համար արտօնուին Առեւտրական Սենեկի կողմէ վկայագիր մը ցոյց տալ միայն:

— Կրէտէի գաւառական ընդհանուր ժո- ղովն, իւր ներկայ նստաշրջանի բացման օրն կուսակալ Ատոսիտէս փաշայի պաշտօնան- կութիւնը վճուր է հետեւեալ կերպիւ:

Փաշան նիստը բացեր է յայտարարելով թէ գիտէ որ ժողովականաց մեծ մասն ի- րեն աննպաստ է, թէ երկու անգամ որ կղզւոյն կուսակալ ընտրուած է, իւր բոլոր ջանքն ի գործ դրած է բնակչաց բարեկե- ցութիւնն ապահովելու համար. սակայն, յարեր է Ն. Վսեմութիւնը, եթէ ժողո- վըդեան երեսովսանք յայտարարեն թէ զժգոհ են իւր պաշտօնավարութենէն, ինք կը հրաժարի:

Ատոսիտէս փաշա ժողովատեղիէն մեկ- ներ է յայնժամ եւ վիճաբանութիւն բաց- օւնելով, ժողովականք ընադատեր են նորա վարչութիւնն և օրօշուր են խնդրել Կայս. Կառավարութենէն որպէսզի պաշտօնանկ ընելով զԱտոսիտէս փաշա, ուրիշ մը կոչէ կուսակալութեան պաշտօնին: Այս որոշում

հեռագրաւ հաղորդուած է Բ. Դրան:

Միւս կողմէ պատգամաւորութիւն մը կազմուելով, կուսակալին ապարանքը գնա- ցեր է, յայտնելով ժողովոյ որոշումն եւ խնդրելով որ ըստ կարելոյն շուտով մեկնի կղզիէն: Փաշան պատասխաներ է թէ չկըր- նար մեկնիլ, առանց Բ. Դրան հրամանն ստանալու: Պատգամաւորութիւնն առանց ժամանակ կորսնցնելու ձանրայ ելեր է հետն ունենալով Կայս. Կառավարութեան ուղղ- եալ խնդրագիր մը եւ վերոյիշեալ նստի ատենագրութիւնն, մայրաքաղաքս գալու համար:

Այս երրորդ անգամն է որ Սամոսցիք ձեռնարկներ կընեն Քոսթաքի փաշան պաշ- տօնանկ ընելու համար: Առաջին երկու անգամները կղզւոյն բնակչաց մէկ մասին թախանձանաց վրայ, որք Ն. Վսեմութեան պաշտօնի վրայ մնալը կուզէին, Բ. Դուռն համակերպեցաւ մեծամասնութեան փա- փաքին, սակայն կ'երեւի թէ այս անգամ զժգոհութիւնն ընդհանուր է եւ կուսա- կալը պիտի հարկադրի քաջուիլ իւր պաշ- տօնէն:

## Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն այսօր հան- դիսաւոր կերպիւ Կայսերական պալատը կ'երթայ Վեհ. Սուլթանին ներկայանալու համար: Նորին Սրբաղնութիւնն ապա Բ. Դուռը պիտի երթայ Բարձր. Մեծ-Նսար- քոսին եւ նախարարաց իւր առաջին այցե- լութիւնը տալու համար:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն իւր օրհ- նութեան անդրանիկ Կոնդակն յղեց առ ա- մենայն գաւառական առաջնորդս եւ առ քարոզիչս մայրաքաղաքիս եկեղեցեաց:

Այս Կոնդակաւ Ս. Պատրիարք Հայրն իւր ի Պատրիարքական Աթոռն բարձրացումը ծա- նուցանելէ յետոյ, առ հասարակ իւրաքան- չիւր դասակարգի Հայոց յորդորական խը- րատներ տալով կը հրաւիրէ զամենեւին ի գործադրութիւն իւրեանց պարտուց առ Ե- կեղեցին եւ առ Ազգն, եւ կը յորդորէ միա- սիրտ եւ միահոգի գործակցիլ միմեանց, որ- պէս զի Հայաստանեայց Եկեղեցւոյ փառքը



«այս ծառանայ եւ Աղգին պատիւը բարձր ի գլուխ պանծայ առաջի ամենայն աշխարհի : Այս կոնդակէն զատ շրջաբերական մ'ալ կայ ուղղեալ առ Թաղական Խորհուրդս , որ կը յորդորէ , ի մէջ այլոց , ազգային մանկըտուոյն դաստիարակութեան հոգ տանիլ եւ եկեղեցեաց կալուածոց բարւոք մատակարարութեան հսկել :

— Հայոց Միացեալ ընկերութեանց կեդր. Ժողովոյ դեր — նախագահն եւ Տնօրէն Ժողովոյ անդամը շաբթուս մէջ Ազգ. Պատրիարքարան գնացին խմբովին շնորհաւորելու համար Ամեն. Ս. Պատրիարք Հայրն : Դեր — նախագահն , Մանուկեան Մկրտիչ Էֆէնտի , ուղերձ մ'արտասանեց յանուն Ընկերութեան , որով շնորհաւորելէ յետոյ Ն. Բարձր Սրբազնութեան պաշտօնն , յոյս յայտնեց որ իւր աջակցութիւնն ու պաշտպանութիւնը չափաի դանայ Ընկերութեան եւ իւր երջանկայիշատակ Նախորդին նման Ընկերութեան բարեբարոյներէն մին պիտի հանդիսանայ : Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրն սիրալիր ընդունելութիւն մ'ընելով Ընկերութեան ներկայացուցիչներուն , համակիր խօսքերով պատասխանեց այս ուղերձին , գովեց Ընկերութեան ազգօգուտ նպատակը , գոհութիւն յայտնեց Ընկերութեան գործոց վրայ զորս ինք անձամբ կը ճանչէր եւ որոց մասին նորանոր տեղեկութիւններ հարցուց Տնօրէն Ժողովոյ Ատենապետ Յովակիմեան Գ. Էֆէնտի եւ միւս բոլոր անդամոց որոց հետ սիրալիր կերպիւ տեսակցեցաւ կէս ժամու չափ : Ն. Բարձր Սրբազնութիւնը խոստացաւ իւր բարձր պաշտպանութիւնը շնորհել Ընկերութեան , եւ ջանք չխնայել Միացեալ ընկերութեանց յառաջդիմութեան համար :

— Ամեն Ս. Պատրիարք Հայրն այս հինգշաբթի հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ազգ. Հիւանդանոցի Ս. Փրկչի մատրան մէջ եւ քարոզ խօսելով , Ս. Համբարձման տօնին շանակութիւնը բացատրելէ յետոյ , Վեհ. Սուլթանին եւ Օսմ. նախարարաց կենաց համար բարեմաղթութիւններ ըրաւ , եւ հանգիստ մաղթեց վասն հոգւոց Ազգ. Հիւանդանոցի համայն բարեբարաց , մասնաւորապէս Պէղծեան , Տատեան եւ Պալեան Ամիրայից :

Զկնի Ս. Պատարագին , Ս. Պատրիարք Հայրն՝ զգեստօւորեալ՝ եպիսկոպոսներէ , վարդապետներէ , դպիրներէ եւ հոգաբարձուներէն շրջապատեալ , Հիւանդանոցի բոլոր յարկերն այցելեց եւ օրհնեց պատսպարեալներն :

Ժամը 6 ին տրուեցաւ սեղանն որուն նախագահեց Ամեն. Ս. Պատրիարքն որ առաջին բաժակն առաջարկեց Վեհ. Սուլթանին կենաց : Այս բաժակ պարպուեցաւ բոլուն ծափահարութեամբ : Ապա Հիւանդանոցի հոգաբարձութիւնը բաժակ առաջարկեց Ս. Պատրիարք Հօր կենաց եւ Ն. Սրբազնութիւնն ալ օրհնելով հոգաբարձութեան աղնիւ ջանքել բաժակ առաջարկեց անոնց կենաց եւ մաղթեց որ այսպիսի բազմադիւն հոգաբարձութեան մը հովանաւորութիւնն ընդ երկար վայելեն ազգին պատսպարեալք :

Առաջարկուեցաւ նաեւ բաժակ վասն հոգւոցն Ազգ. Հիւանդանոցի հիմնադրին եւ համայն բարեբարաց : Սեղանէն յետոյ , Ս. Պատրիարքն այցելեց վարժարանն ուր երգերով ընդունուեցաւ անդ աշակերտներէն մին ուղերձ մ'արտասանեց որուն պատասխանեց Ս. Պատրիարքն քաջալերիչ խօսքերով :


Ապա դաշտավայրն առաջնորդուելով , անդ քիչ մը հանգիստ առնելէ յետոյ , մեկնեցաւ ի Սամաթիա , ուր տեղւոյն Թաղ. խորհրդոյ հետ աչքէ անցուց կառուցանելի եկեղեցւոյն հիմներն , օրհնեց զՄեծ. Յակոբեան եղբարս որք բարեբար հանդիսացած են այս մեծ գործին , եւ զԹաղ. խորհուրդն ու զԺողովուրդն որ այս շինութեան գործն յատկապէս ի գլուխ հանելու համար ամեն ջանք ի գործ կը դնեն :

Յետոյ Ս. Պատրիարքն հանդիսիւ վերադարձաւ ի Պատրիարքարան :



# **ԼՈՅԹՐՆ ԵՒ ՉԻՍՆԵԼ** **ՄԹԵՐԱՆՈՑ** **ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ** **ԳՈՐԾԵԱՑ**

ՔԻՒՐՔՅԻ ԳԱՅՈՒՍԸ, ՂԱՂԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ Հնձող մեքե- նայն երկու ձիով կը քաշուի և կը կշռէ 300 օխա :

**ԳԻՆ՝ 35 ՕՍՄ · ՈՍԿԻ Է**

Մեքենային կատարելագործութիւնը ե- րաշխաւորեալ է : Գնողըն երբ գոհ չիլինի , կրնայ ետ առնուլ իւր ստակն :

## **ԵՐՈՒԱՆԴ · Մ · ՊՅՅԱՃԵԱՆ**

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՍԵՒ ԵՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ՄԱՋԻ ՆԵՐԿԵՐՈՒ  
204 . - Մահմադ Բաշա Բաշա , Բէ - 204

**ՍԵՒ ՆԵՐԿ**

Թուրքիոյ մէջ պատրաստուած եւ գործածուած սեւ ներկերուն վրայ իմ կատարելագործեալ բաղադրութեանս առաւելութիւնը յաճախորդք գէթ մի անգամ փորձելով կրնան հասկնալ :

**ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ՆԵՐԿ**

Կան այնպիսի մազեր որ ի բնէ շա- գանակագոյն բայց ճերմակ մազերով խառն են : Իմ բաղադրութիւնս , որ տասն վայրկեանի մէջ մազերն իրենց բնական գոյնին կը դարձնէ , առ նուա- ղըն մինչեւ մէկ ու կէս ամիս կրնայ տե-ւել , առանց անոնց բնական փայլու-նութիւնը կորսնցնելու , որով կը գե-

րաղանցէ եւրոպայէ եկած սեւ և շա- գանակագոյն նմանօրինակ ջուրերը , մանաւանդ որ քիմիական բաղադրու-թեամբ վնասակար հետեւանք յառաջ չբերեր բնաւ : Վերոյիշեալ ներկերը գործածելու եղանակին վրայ տեղեկու-թիւնք կը տրուին վաճառատունէս : Դիները յոյժ գոհացուցիչ են :

Շատ գնողներու համար 20 Օ|0 զեղչ կը լինի :

38—52

## **ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ**

Պ. ԼԵՔՈՔԻ ՄԵՐՈՒԹԻՒՆԸ  
ՓՈՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

Իւթիւճեան Կարապետ Էֆէնտիի Թարգ- մանութեամբ Արեւելքի մէջ իրբեւ թերթօն հրատարակեալ այս հետաքրքրաշարժ և միանգամայն հրահանգիչ վէպին ամբողջ չորս հատորները կազմուած կը վաճառ-ուին մայրաքաղաքիս ամեն հայ գրավա-ճառաց քով , և կամուրջին գլուխը ջրավա-ճառ Պօղոս և Յակոբ աղաներու խանութ-ները : Զորս հատորին գինն է 20 շրուշ :

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ Կ. Ս. Իւթիւճեան Էֆէնտիի հետեւեալ Թարգ-մանութիւնք .

|                                                   |            |
|---------------------------------------------------|------------|
| ԹԱՓ. ՀՐԵԱՅ Բ. տպագրութիւն պատկե-րազարդ Ա. հատոր . | գին շրշ 30 |
| ՅԵՐԿՐԷ Ի ԼՈՒՍԻՆ                                   | » » 7 1/2  |
| ՄԱՐԲԻՉՈՒՆԻ                                        | » » 7 1/2  |
| ԸՆՏԱՆԵՉՈՒՐԿ 2 հատոր                               | » » 15     |
| ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՑ ԵՐԴՈՒՄԸ                             |            |
| 2 հատոր                                           | » » 12     |
| ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԻՉԻ                              | » » 6      |

## **Ա. Զ. Դ.**

Լաւ ձեռագործ գիտցող և այլևայլ ուսմանց հմուտ վարժուհի մը , որ ազ-գային վարժարանաց մէջ յոյժ գոհա-ցուցիչ կերպիւ պաշտօններ վարած է , կը փափաքի աղքատի վարժարանի մը կամ պատուաւոր տան մը մէջ վար-ժուհւոյ պաշտօն վարել :

Պէտք ունեցողք կրնան գիմել «Ա. րեւելք»ի Խմբագրատունը :



**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ**

**ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**  
**ԿԱՄ**

**ՈՒՍՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ**  
Ի պէտս Հափահաս աշակերտաց, ըն-  
ծայացուաց և եկեղեցաւորաց .

Երկարութեաց  
**Տ. ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՔԻՁԻՐԵԱՆ**  
(Գին կէս մէճիւր)

**ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ**  
**ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ**

**Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**  
Թարգմանիչ ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ  
Հրատարակիչը  
Նշան Կ. Պէրպլէրեան Ս. Տէօֆիլեան

Սոյն գործին Բ. Հատորն եւս, որ կը պա-  
րունակէ 72 մեծ և փոքր պատկեր, ամբող-  
ջացած ըլլալով, տպուած է երրորդ Հատորի  
հրատարակութեան :

Առաջին և երկրորդ Հատորներու թղթա-  
կազմին գինն է՝ իւրաքանչիւրին 30 դր :

Երրորդ Հատորի բաժանորդագրութեան  
գինն է 25 դր :

16 երեսէ բաղկացեալ մէն մի թերթ 30  
բարս :

Գաւառաց Համար թղթատարութեան  
ծախքը միատեղ հաշուելով, մէն մի Հատորի  
գինն է 30 դր :

Գաւառներէ բաժանորդ գրուիլ յիշատա-  
քողը պարտին բաժնեգինը ԿԱՆԻՍԻԿ յղել,  
Օսմանեան թղթատարի նամակագրոյնով,  
« Բուրաստան Մանկանց » հանդիսի խմբագ-  
րատունն, հետեւեալ հասցէիւ .

Նշան Կ. Պէրպլէրեան  
Կ. Պոլիս, Էսկի Չապիթիէ ճատտէսի, թիւ 63

**Գ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ**

**ՀԱՄԱՌՈՏ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

Ի ՊԵՏԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ

Ազգային առաջնակարգ վարժարա-  
նաց Համար անհրաժեշտ եղող սոյն  
օգտակար դասագիրքը կը գտնուի բո-  
լոր գրավաճառաց քով : Կեդրոնատե-  
ղին է Հայոց Միացեալ Ընկերութեանց  
Դրասնեակը, Կալաթա, Կէօչէ Օղլու  
Խան, 12 :

Արտօնատէր

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

Գին 20 դահ. արծաթ :

Շատ գնողաց համար գոհացուցիչ  
զեղը կը լինի : 2—10

**ԲԱՌԳԻՐՔ**

**ՀԱՅ—ԳԱՂՂԻԱՐԷՆ**

**Ի Ա. ՆԱՐ-ՊԷՅ ԼՈՒՍԻՆԵԱՆԷ**

**Բ. ՏԻՊ**

Տպագրութեան և փաշտ

Գրական յառաջադիմութեան սատա-  
րելու և ազգին ուսանող պատանեկութիւնը  
քաջալերելու բարի նպատակաւ, մեծանուն  
հեղինակը բարեհաճած է 25% զեղը ընել  
իր վերոյիշեալ աշխատութեան գնոյն վրայ,  
որ իր տեսակաւն միակ և պատուականա-  
գոյն գործ մ'է Հայ մատենադարանին մէջ :

Գին Կաշեալ օրէնքի, փոխան 20 և 15 ֆրանկ :

Յիշեալ գրքին վաճառման ընդհանուր  
գործակալութիւնն այսուհետեւ յանձնուած  
է առ Ե. Վրոյր և Ընկ. Թղթաւաճառ ի Կա-  
լաթա, Քոմիսիօն խանին դուրսը, թ. 25 :  
Չափաւոր տասանորդով կը վաճառուի մեծ  
քանակութեամբ գնել ուզող գրավաճառաց :  
Ազգային հաստատութիւնը, նոյնպէս և վը-  
կայեալ կարօտ սւսանողը իրաւունք ունին  
տրժանաւոր զեղը մը ստանալ որոշեալ գը-  
նոյն վրայ :

**ՍԵՂԱՆԻ ՐՄՊԵԼԻ**



**ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ ՔԵՐՄԱՆԻ**

Նման « Շարթրէօղ » ի գինւոյն,  
ախորժահամ և յոյժ առողջարար  
բմպելի մ'է և մեծապէս կը դիւ-  
րացնէ մարսողութիւնը :

Գլխաւորապէս կը գտնուի Պ.  
Պէրթէն եղբարց քով, Ղալաթիա,  
Սիթէ Ֆրանսէզ :

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ